Ազգ
Azg
5 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 11(5094)
ISSN: 1829-1651

# Ահմեդ Թյուրք. «Մեր հայրերի անունից ներողություն ենք խնդրում»

Քուրդ հեղինակավոր գործիչ, Թուրքիայի վարչապետ Էրդողանի եւ Քրդական բանվորական կուսակցության (PKK) կալանավորված ղեկավար Աբդուլլա Օջալանի միջեւ բանակցությունների գլխավոր միջնորդ, Թուրքիայի ազգային մեծ ժողովում Մարդինի պատգամավոր եւ Դեմոկրատական հասարակություն կոնգրեսի համանախագահ Ահմեդ Թյուրքը խոսել է 1915 թ. Հայոց ցեղասպանությունում քրդերի ունեցած դերի մասին:



Ստամբուլում հրատարակվող թուրքական «Միլլիեթ» օրաթերթը տեղեկացնում է. Ահմեդ Թյուրքը, որը Իմրալիում ցմահ բանտարկված ՔԲԿ-ի առաջնորդ Օջալանի հետ հանդիպելուց հետո ավելի շուտ ճանաչված է որպես խաղաղության բանագնաց, IMC-TV հեռուստաալիքին տված հարցազրույցում ասել է. «Արդեն պահն է, որ մենք բոլորս, ճիշտ ընթերցելով պատմությունը, ընդունենք անցյալի իրականությունները: Մեր հայրերը եւ նախնիները օսմանցիների միջոցով օգտագործվել են հայերի, ասորիների եւ եզդիների ջարդերում»:

Ահմեդ Թյուրքը հավելել է. «Ընդունենք որ մեր նախնիների ձեռքերը ներկվել են հայերի, ասորիների եւ եզդիների արյունով, եւ մենք, որպես նրանց զավակները եւ թոռները, պարտականություն ունենք ազնվությամբ եւ համարձակությամբ ներողություն խնդրելու նրանց ժառանգորդներից: Իմ կարծիքով՝ այս ներողության ընդունումը մեծ ու հեղաշրջող նշանակություն ունի եւ կարող է փոփոխություն մտցնել մեր ապագայի հասարակական եւ մշակութային հաշվարկներում»:

«Ես հուսով եմ, որ Թուրքիան նույնպես կընդունի այս իրականությունը, որ հայերից ներողություն խնդրելը պատմական անհրաժեշտություն է: Թուրքիայի պետությունը չի կարող հերքել այն իրականությունը, որ օսմանական ժամանակաշրջանում պետության հրամանով տասնյակհազարավոր հայեր, ասորիներ եւ եզդիներ կոտորվել են: Եվ քանի որ նման մեծ ողբերգությունը պատահել է նախքան Թուրքիայի հանրապետության հիմնվելը, ուստի ներողություն խնդրելը չպիտի դժվար եւ անկարելի լինի», եզրակացրել է Ահմեդ Թյուրքը:

«Առաքս» շաբաթաթերթ, Թեհրան, 03-02-2013

# Խփել չի կարելի թռչել. ո՞վ ճիշտ տեղում կդնի «ստորակետը»

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ինչպես ԼՂ հարցում առհասարակ, այնպես էլ Ստեփանակերտի օդանավակայանի հավանական գործարկման կապակցությամբ պաշտոնական Բաքվի վիճակը նախանձելի չէ: Բանակցություններում տեղաշարժ նույնիսկ չի ուրվագծվում, իսկ Ստեփանակերտ թռչելիք քաղաքացիական «առաջին իսկ օդանավը խորտակելու» մասին իշխող վարչախմբի հայտարարությունները միջազգային հանրության մեջ ավելի են խորացրել Ադրբեջանի՝ որպես ոչ քաղաքակիրթ երկրի մասին պատկերացումները:




Ստեղծված անբարենպաստ ֆոնը ցրելու փորձ է արել փոխարտգործնախարար **Արազ Ազիմովը**: APA գործակալությանը նա ասել է. «Չիկագոյի կոնվենցիայի համաձայն գոյություն ունեն որոշակի կանոններ, որոնք ճանաչված են Ադրբեջանի կողմից: Դրանք ենթադրում են ապօրինի թռիչքների կանխում եւ դրանց (օդանավերի) հարկադիր վայրէջք որոշակի օդանավակայանում: Ուստի ճիշտ չէ, երբ ոմանք նախապես շահարկում են, որ Ադրբեջանը կործանելու է քաղաքացիական օդանավերը»:

Մի կողմ թողնենք հանգամանքը, որ Չիկագոյի կոնվենցիան կարգավորում է փոխադարձաբար ճանաչված օդային տարածքներում քաղաքացիական թռիչքների հետ կապված հարցեր եւ չի շոշափում իրավիճակներ, ինչպիսին առկա է Ադրբեջանի եւ ԼՂՀ չկարգավորված հարաբերություններում: Դա ակներեւաբար այլ խոսակցության թեմա է: Ընդգծենք, որ Չիկագոյի կոնվենցիան ստորագրած երկրներին պարտավորեցնում է ընդհանրապես չկործանել քաղաքացիական օդանավեր եւ, իրոք, սահմանում հարկադիր վայրէջքի կամ թռիչքն ընդհատելու եւ ելման օդանավակայան վերադարձի հետ կապված հանգամանքներ:

Տես էջ 5

# Քաղցկեղի ցուցանիշն աճում է

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երեկ, փետրվարի 4-ը, քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օրն էր: 2005-ից ի վեր՝ ամեն տարի այս միջոցառումը կազմակերպում է Համաշխարհային հակաքաղցկեղային միությունը, իսկ նպատակն է հիշեցնել, թե որքան վտանգավոր ու տարածված են օնկոլոգիական հիվանդությունները: Մանավանդ վերջին տասնամյակներին չարորակ նորագոյացություններով հիվանդացության ու դրանցից մահացածության ցուցանիշը գնալով ավելանում է:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ 2020 թվականին չարորակ նորագոյացություններից մահացողների թիվն ամբողջ աշխարհում կկազմի 10 միլիոն:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ չարորակ նորագոյացություններով հիվանդացության ընդհանուր կառուցվածքում առաջին տեղերում են թոքի, կրծքագեղձի, արգանդի վզիկի քաղցկեղը, իսկ միայն կանանց մեջ ամենատարածվածը հենց կրծքագեղձի քաղցկեղն է: Ինչպես շատ երկրներում, Հայաստանում եւս նկատվում է կրծքագեղձի քաղցկեղով հիվանդացության ցուցանիշների աճ:

Տես էջ 4

# «Ինչո՞ւ է լռում Էրդողանը, երբ Սիրիան ռմբակոծում են»

Վերջերս Իսրայելի ռազմական օդային ուժերը ռմբակոծել էին Սիրիայի տարածքը: Թեեւ անհայտ մնաց ռմբակոծության պատճառը, սակայն Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտնի էր իր հակաիսրայելական ելույթներով եւ լուռ մնաց: Այս հանգամանքը գրավել է Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահ Քեմալ Քըլըչդարօղլուի ուշադրությունը, եւ նա փետրվարի 2-ին Ստամբուլում «գրոհել է» Էրդողանի վրա:

Ահա թե, ըստ «Ենիչաղի», ի՞նչ է ասել Քըլըչդարօղլուն. «Ռմբակոծությունը տեղի է ունեցել օրեր առաջ, բայց «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանությունները շարունակում են լռել: Սիրիան ամենեւին պետք չէ կառավարությանը: Որեւէ դիրքորոշում հայտնե՞լ է, թե՞ մի բան է ասել կառավարությունը: Ինչո՞ւ ծպտուն չի հանում վարչապետը, չէ՞ որ մինչեւ վերջերս գոռում-գոչում էր, Սիրիան համարում իրենը: Ինչո՞ւ ծպտուն չի հանում, երբ ռմբակոծում են Սիրիայի տարածքը: Մի՞թե մեր երկիրը վարչապետ կամ արտգործնախարար չունի: Ռմբակոծված երկիրը մեր անմիջական հարեւանն է: Դու մեր երկրում գրոհայիններ ես պատրաստում: Նրանց զինում ես եւ այնտեղ ես ուղարկում, ասելով. «Գնա, սպանիր եղբորդ»: Այս ամենից հետո էլ լռում ես: Մինչեւ վերջերս հակաիսրայելական ելույթները քո քաղաքականության առանցքն էին: Հիմա ինչո՞ւ ես լռում: Թե ոմանք քեզ «սուս» են ասել»: Հ. Չ.

# Ադրբեջանը փարիզյան վերջին հանդիպմանը որեւէ առաջարկ չի արել

Ադրբեջանում պարապ չեն մնում. հերթական անգամ փորձեր են արվում Փարիզում արտգործնախարարների մակարդակով հունվարի վերջին տեղի ունեցած հանդիպման ելքն էլ անհաջող որակելու եւ մեղքը, բնականաբար, Հայաստանի վրա գցելու:

Ադրբեջանի ԱԳ մակարդակով հայտարարության ձեւով ադրբեջանական լրատվամիջոցները տարածել են, թե հայկական կողմը Փարիզում կայացած հանդիպման ժամանակ իբր մերժել է Ադրբեջանի արած ինչ-որ առաջարկներ:

ԱԳՆ մամլո խոսնակ **Տիգրան Բալայանը** News.am լրատվական կայքի խնդրանքով պարզաբանել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների եւ եռանախագահների փարիզյան վերջին հանդիպմանը որեւէ առաջարկ ադրբեջանական կողմը չի արել:

«Ավելին, այդ հանդիպման վերաբերյալ նախարարների ու համանախագահների համաձայնեցված մամլո հնգակողմ հաղորդագրությունը մինչ այսօր ադրբեջանական կողմը չի տեղադրել ԱԳՆ կայքում», տեղեկացրել է Բալայանը:

Նրա խոսքերով, Ադրբեջանի ԱԳՆ մամլո խոսնակը փորձում է այդ հանդիպման մասին մատուցել իրենց շինծու մեկնաբանությունը, ընդ որում, նույնը պատահել էր նախորդ փարիզյան հանդիպման համաձայնեցված հաղորդագրության հետ: «Դա ոչ այլ ինչ է, քան ադրբեջանական կողմին այդքան բնորոշ սեփական հանրության աչքերին թոզ փչելը»:

«Մեկ բան Ադրբեջանի փոխարտգործնախարարը ճիշտ է ասում. Փարիզում Հայաստանի ԱԳ նախարարի մոտեցումները չէին տարբերվում նախկինում արտահայտած մոտեցումներից: Դա բնական է, Հայաստանի դիրքորոշումը եղել եւ մնում է համահունչ եռանախագահների արտահայտած միջազգային հանրության մոտեցումներին: Իսկ ադրբեջանական կողմը համառորեն շարունակում է մերժել կամ փորձում է վերատեսության ենթարկել եռանախագահների ներկայացրած բոլոր առաջարկները, ինչը կրկնվեց նաեւ Փարիզում կայացած վերջին հանդիպման ընթացքում», ասել է Բալայանը:

Վ. Պ.

# Պարույր Հայրիկյանն այսօր որոշում կկայացնի

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թեպետ «Ազգային ինքնորոշում միավորման» առաջնորդ, նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանի շտաբից հայտարարել էին, որ ընտրությունների ընթացքի վերաբերյալ որոշումը թեկնածուն կհայտարարի երկուշաբթի, սակայն լրագրողների հետ հանդիպումը տեղափոխվեց. այսօր «Երեւան» հյուրանոցում կկայանա Հայրիկյանի փաստաբանի եւ նրա ներկայացուցիչների ասուլիսը, որտեղ կհայտարարեն՝ ընտրությունները երկու շաբաթով հետաձգո՞ւմ են, թե՞ ոչ: Երեկ Հայրիկյանի շտաբից «**Ազգ**» օրաթերթին հայտնեցին, որ այժմ ավելի քան քսանհոգանոց խումբ է աշխատում եւ լուրջ ուսումնասիրություններ անցկացնում: Նախագահի թեկնածուն հանձնարարել է ուսումնասիրել՝ մահափորձից հետո հիվանդանոցում անցկացրած ընթացքը որքանո՞վ է ազդել իր վարկանիշի վրա: Հայրիկյանի շտաբից շեշտում են, որ քարոզարշավի ընթացքում, յուրաքանչյուր օր նրա



վարկանիշը կես տոկոսով աճել է: Հետեւաբար, եթե այս ընթացքում Հայրիկյանի վարկանիշն աճել է, ապա թեկնածուն չի դիմի Սահմանադրական դատարան, իսկ եթե ոչ, ապա կդիմի ընտրությունները 15 օրով հետաձգելու պահանջով: Հիշեցնենք, որ հունվարի 31-ին, ժամը 23.30-ի սահմաններում Տպագրիչների փողոցի թիվ 9 շենքի բակում անհայտ անձը հրազենից կրակ էր արձակել ՀՀ նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանի վրա՝ աջ անրակի շրջանում պատճառելով հրազենային վնասվածք: ԱԻՄ առաջնորդին տեղափոխել էին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք, որտեղ էլ ենթարկվել էր վիրահատության:

Տես էջ 4

## Ընթացիկ

# Դեմիրճյանը եւ Ծառուկյանը եկել էին Ազգային ժողով

Երեկ Ազգային ժողովում քննարկվող օրենքների նախագծերից մեկով բանակում ներդրվելու է հոգեբան-սպայի ինստիտուտը, որը, խոստովանենք, մեր բանակում ստեպ-ստեպ տեղի ունեցող դժբախտ դեպքերի եւ մահերի պարագայում իսկապես օգտակար կարող է լինել: Մի ուրիշ՝ կառավարության օրենսդրական նախաձեռնության քննարկման ժամանակ քննարկմանը միջամտեց Ազգային ժողովի նախագահ **Հովիկ Աբրահամյանն** ու իր անհամաձայնությունը հայտնեց. «Սա հարցի լուծում չէ, ազնիվ չէ, պետք է մտածել լուծում տալ հարցին, պետք չէ քաղաքացուն ուղարկել մասնավոր բանկ, իսկ պետությունը մնա դիտողի դերում», այս բովանդակության դիտարկումը վերաբերում էր բռնադատվածների մասին օրենքում առաջարկված փոփոխությանը՝ առաջարկելով մի լավ քննարկել, լուծումները գտնել, հետո որոշում կայացնել: Փոփոխությամբ առաջարկվում է բռնադատվածներին եւ նրանց զավակներին տրամադրվող արտոնյալ վարկերը այնուհետեւ բռնադատվածներին տրամադրել առեւտրային բանկերից, գրավադրումով, քանի որ նախորդ ստացված վարկերը վերադարձնելու խնդիր է ծագել:





Սակայն չենք պատմի այնքան երեկ գումարված հինգերորդ գումարման երրորդ նստաշրջանի առաջին օրվա օրենսդրական գործունեության մասին, որքան աշնանային նստաշրջանի մեկնարկի արտաքին նկարագրությամբ կզբաղվենք այս անգամ, քանի որ նկարագրելու բան, հիրավի, կա:

Նախորդ նստաշրջանում բացակայած պատգամավորներից լրագրողների ուշադրության կենտրոնում էին այս նիստին գոնե սկզբում ներկա ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանն ու ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանը:

Առաջինի հետ լրագրողներն այդպես էլ չկարողացան շփվել, քանի որ նա դահլիճ մտավ շատ արագ, իսկ դահլիճից դուրս եկավ առաջին նիստը սկսվելուց մի փոքր անց, այն էլ ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի հետ՝ ԱԺ նախագահի համար նախատեսված մուտքից, այնպես որ լրագրողներն այդպես էլ նրան չտեսան: Հիշեցնենք, որ Գ. Ծառուկյանը ոչ միայն ԱԺ նիստերին երկար ժամանակ չի մասնակցել, այլեւ ԲՀԿ-ի՝ նախագահական ընտրություններին թեկնածու չառաջադրելու որոշումից հետո այդպես էլ հրապարակավ եւ անձամբ բացատրություններ չի ներկայացրել եւ երբեւէ չի պատասխանել լրագրողների հարցերին:

Առողջական խնդիրների պատճառով տեւաբար Ազգային ժողովից բացակայող՝ ՀԱԿ-ի խմբակցության պատգամավոր, ՀԺԿ նախագահի 4 լրագրողները ուզում էին տեսակետներ լսել քաղաքական ներկա զարգացումների վերաբերյալ: Լրագրողների հարցերին պատասխանելով՝ նա նշեց, թե ՀԺԿ-ն ՀԱԿ-ից դուրս գալու մտադրություն չունի, հակառակը, քանի որ ՀԺԿ-ն միշտ համախմբող ուժ է եղել, ջանալու է, որ ՀԱԿ-ի գործունեությունն ավելի արդյունավետ դառնա, ինչպես, նրա կարծիքով, ՀԱԿ-ի մյուս անդամ կուսակցությունները պետք է անեն: Նախագահական թեկնածուներից ոչ մեկին, փաստորեն, ՀԺԿ-ն չի սատարելու, այդ թվում՝ Հրանտ Բագրատյանին: Այդպիսի որոշման պատճառ է, ըստ Դեմիրճյանի, այն, որ պատժված չեն նախորդող ընտրությունների ընտրակեղծարարները, մարտի մեկի սպանդի մեղավորները: Իսկ ընդհանրապես՝ Դեմիրճյանը կարծում է, թե այս ընտրություններով կյանքը չի ավարտվում, ՀԺԿ-ն էլ շարունակելու է իր քաղաքական գործունեությունը: Պարույր Հայրիկյանի հանդեպ իրականացված մահափորձից հետո ստեղծված իրավիճակը Դեմիրճյանի կարծիքով պետք է հանգուցալուծվի Սահմանադրության շրջանակում: Հայրիկյանին առողջություն ցանկացավ, ենթադրություններ էլ չարեց՝ ո՞ւմ էր ձեռնտու տեղի ունեցածը:

Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը երեկ հայտարարեց, որ «Ժառանգություն» խմբակցության կազմից պաշտոնապես դուրս է եկել «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ Խաչատուր Քոքոբելյանը: Վերջինս լրագրողների հետ զրույցում նշեց, որ դեմ լինելով ձեւական գործողություններին եւ օրենքի պահանջը կատարելով՝ ընդամենը օրինական տեսք է տվել առկա իրողությանը, եւ իր քայլը ոչ ընտրությունների, ոչ էլ որեւէ այլ քաղաքական գործընթացի հետ կապ չունի եւ ԱԺ-ի գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու հանգամանքով է պայմանավորված: Մյուս ազատդեմոկրատական Ալեքսանդր Արզումանյանը ֆորմալ առումով չի կարող դուրս գալ խմբակցությունից, օրենքը դա թույլ չի տալիս, իսկ ինքն արդեն անկախ պատգամավոր է եւ այլ խմբակցություն չի մտնելու: Րաֆֆի Հովհաննիսյանին էլ ընտրարշավում հաջողություն ցանկացավ:

Ի դեպ նշենք՝ երեկ հայտնի դարձավ, որ մի խումբ պատգամավորներ, ուսումնասիրելով մանր բիզնեսով զբաղվողների բողոքները, նախաձեռնել են փոփոխություններ «Արտոնագրային վճարների մասին» օրենքում, որն անցած տարեվերջին ընդունվեց եւ նոր հարկերով նեղացրեց մանր ու միջին բիզնեսով զբաղվողների տեղը (նրանցից ատամնաբույժները հասկապես բողոքում էին): Նախաձեռնողներից ՀՀԿ-ական Սուքիաս Ավետիսյանի կարծիքով այս փուլում սոցիալական նոր լարվածություն ոչ մեկին հարկավոր չէ: Նախաձեռնողներն առաջարկում են ողջամիտ հարկային նշաձողեր:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

### ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## 2,5 մլն քմ ասֆալտապատում Երեւանում այս տարի

Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդագրությունից տեղեկացանք, որ 2013-ին մայրաքաղաքում կիրականացվեն 2,5 մլն քմ ծավալով ասֆալտապատման աշխատանքներ: «Ծավալները մեծ են, եւ ծրագրում ներառված են մայրաքաղաքի գրեթե բոլոր վարչական շրջանները: Արդեն իսկ հստակ է նաեւ հիմնանորոգման ենթակա փողոցների ցանկը: Ուստի այդ ցանկը տրամադրենք նաեւ «Երեւանջուր», «Երեւանգազ» եւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերություններին, որպեսզի նրանք այդ փողոցներում այս տարվա ընթացքում իրականացվելիք իրենց աշխատանքները պլանավորեն այնպես, որ հիմնանորոգումից հետո այլեւս քանդման անհրաժեշտություն չառաջանա», քաղաքապետարանում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ ընդգծել է քաղաքապետ Տարոն Մարգարյանը:

## Ծառատունկը բացառապես ոռոգելի տարածքներում

Կանաչ տարածքների պահպանման եւ ընդլայնման նպատակով 2013-ին մայրաքաղաքում կանցկացվի եւս 20 կմ ոռոգման նոր ցանց: Քաղաքապետը հանձնարարել է աշխատանքների իրականացման ժամանակացույցն այնպես պլանավորել, որ այս տարի նախատեսվող ծառատունկը կազմակերպվի բացառապես ոռոգելի տարածքներում:

## Ճանապարհաշինությունը սահմանված ժամանակացույցո՞վ

Ըստ Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության, սահմանված ժամանակացույցի համաձայն շարունակվում են Ուլնեցու փողոցից Ռուբինյանց փողոց տանող 2,5 կմ երկարությամբ շրջանցիկ նոր ավտոճանապարհի, ինչպես նաեւ Լենինգրադյան փողոցը Իսակովի պողոտային կապող ավտոմայրուղու կառուցման աշխատանքները: Քաղաքապետ Տարոն Մարգարյանը պատասխանատուներին հանձնարարել է ամենօրյա հսկողության տակ պահել կատարվող աշխատանքների ընթացքն ու որակը:

Նախկինում ասվել էր, որ Լենինգրադյան փողոցը Իսակովի պողոտային կապող ավտոմայրուղու կառուցման աշխատանքները պետք է ավարտվեն փետրվարին, սակայն, ակնհայտ է, որ այս մայրուղու կառուցումը փետրվարին չի ավարտվի: Մեր թերթում մի քանի անգամ անդրադարձել էինք ամառային ամիսներին այս ճանապարհի շինարարության անհասկանալի դադարին, ինչի պատճառով էլ, հակառակ ճանապարհի կառուցման համար պատասխանատու չինովնիկների հավաստիացումների, սահմանված ժամկետներում անհնար է այն ավարտելը:

## Եվս 80 ավտոբուս, բայց ...

Քաղաքապետարանում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ զեկուցվել է, որ նախորդ շաբաթ եւս մեկ միկրոավտոբուսային երթուղի փոխարինվել է ավտոբուսայինով: Զեկուցվել է նաեւ, որ փետրվար ամսին քաղաքային տրանսպորտի երթուղիները կհամալրվեն մասնավորի ներկրած եւս 80 ավտոբուսով:

Այս առթիվ եւս մեկ անգամ կցանկանայինք նշել, որ ավտոբուսների ներմուծումն ու ավտոբուսային երթուղիների ավելացումը դեռ չեն նշանակում հասարակական տրանսպորտի աշխատանքների բարելավում: Բազմաթիվ երթուղիներում ավտոբուսները չվերթի են դուրս գալիս 30 րոպեից շատ ավելի երկար տարբերությամբ, հարկադրելով ուղեւորներին այլեւս հույս չկապել դրանց հետ: Այսինքն, ավտոբուսների ներմուծումը հարկ է զուգակցել դրանց կանոնավոր աշխատանքով, այլապես տեսանելի փոփոխություններ, որ խոստացել էր քաղաքապետարանը արդեն այս գարնանը, Երեւանի հասարակական տրանսպորտում չեն լինի:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Համակարգիչն ու մենք

*Գրել լատինատա՞ռ, թե՞ հայատառ*

Ինչպես տեղեկացրին ԿԳ նախարարությունից, կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանը** նամակ է հղել «Apple» ընկերության գործադիր տնօրեն Թիմ Կուկին, որում մասնավորապես ասված է. «Apple» ընկերության շարժական սարքավորումներն օրեցօր ավելի լայն տարածում են գտնում ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում բնակվող սփյուռքահայության շրջանում: Մեր օրերում շարժական սարքավորումները՝ մասնավորապես պլանշետները, դիտվում են որպես ազդեցիկ ուսումնական միջոցներ, որոնք կիրառվում են կրթական հաստատություններում: Սակայն բարձր որակային լուծումներ ունեցող iPad-երը, որոնք ծառայում են ուսուցիչներին եւ աշակերտներին, չեն ապահովում հայերեն լեզվով աշխատելու, հաղորդակցվելու եւ շփվելու հնարավորությունը, քանի որ գործառնական համակարգը (iOS) չունի հայերեն ստեղնաշար»,- եւ ավելացրել է. «Վստահ եմ, որ «iOS» համակարգում հայերեն ստեղնաշարի կիրառումը բխում է մեր ընդհանուր շահերից: Մենք պատրաստակամ ենք ցուցաբերել մեր աջակցությունն այս հարցում»:

Շատ կարեւոր խնդիր է բարձրացրել պրն Աշոտյանը, քանի որ նորագույն տեխնոլոգիաների զարգացումից հայերը հետ չեն մնում եւ Հայաստանում կան արդեն կրթական հաստատություններ, որտեղ ուսումնական գործընթացն ընթանում է համակարգչների կիրառությամբ:

Սակայն այժմ կա եւս մի խնդիր, եթե պլանշետներում բացակայում է հայերեն տառաշարը, ապա համակարգիչներում առկա է, սակայն, ցավոք սրտի, շատ հաճախ հանրության կողմից չի կիրառվում:

Այժմ հայերի շրջանում տարածված է տարբեր սոցիալական կայքերում լատինատառ գրառումներ թողնելը, որն էլ, բացի տարբեր անհարմարություններից, իր վատ ազդեցությունն է ունենում մարդկանց վրա, մասնավորապես՝ երիտասարդության:

Ավելին՝ նախկինում Երեւանի պատերին կարող էինք տեսնել հայատառ գրառումներ՝ «Ես քեզ սիրում եմ», «Ներիր ինձ», այժմ՝ «es qez sirum em», «nerir indz» եւ այլն: Եթե զգացմունքային նման իրավիճակներում գտնվող մարդն այդ պահին գրում է լատինատառ, ապա դա արդեն լուրջ հոգեբանական խնդիր է:

«**Ազգը**» զրուցեց հոգեբան Կարինե Նալչաջյանի հետ. «Պետք է գրել հայատառ հենց հոգեբանական տեսանկյունից՝ իրեն լիարժեք զգալու համար: Լատինատառ գրելն առաջացնում է ոչ լիարժեքության զգացողություն հանրության շրջանում, այսինքն քո լեզուն համացանցում կիրառելի չէ: Ըստ իս, դա ինքնության մեջ որոշ փոփոխությունների, գրագիտության պակասի, ինչպես նաեւ օտարամոլության արդյունք է»:

Հուսանք՝ կգա ժամանակ, որ հայ մարդը հնարավորություն կունենա օգտագործելու եւ կհարգի իր մայրենի լեզուն:

Ս. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Չկա որեւէ փաստարկ՝ մերժելու ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը

## *Նախագահ Սարգսյանի հարցազրույցը ռուսաստանյան «Օգոնյոկ» պարբերականին*

«Շրջափակման ճեղքումը մեզ համար մեծ գործ կլինի, առաջին հերթին՝ տնտեսության առումով: Փոխադրումների անհնարինության կամ թանկության պատճառով որոշ ապրանքներ ուղղակի մրցունակ չեն: Իհարկե, դրա համար չորս կողմերի համաձայնություն է անհրաժեշտ, բայց վերջերս այցով Հայաստանում եղած Վրաստանի վարչապետ Իվանիշվիլին վստահեցրել է ինձ, որ երկաթուղու բացումը շահավետ է նաեւ Վրաստանի համար», ռուսաստանյան «Օգոնյոկ» պարբերականին տված հարցազրույցում անդրադառնալով աբխազական երկաթուղու հնարավոր բացմանը՝ հայտարարել է Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը**:

Հարցազրույցի հիմնական թեման նախընտրական ու ընտրական վիճակն է Հայաստանում: Սերժ Սարգսյանն այդ համատեքստում նշել է, որ, իր ընկալմամբ, նախագահ ընտրվող մարդը պետք է ծառայի ժողովրդին, ինչը նշանակում է «միշտ պատրաստ լինել աշխատելու, համբերելու, եւ եթե հարկ է՝ կյանքը տալու»: Որպես իր նախագահության ընթացքում ձեռքբերում նշելու առումով էլ Սարգսյանը նախ հայտարարել է, թե հինգ տարի առաջ Հայաստանում քաղաքական հակազդեցությունն ու ատելությունը տառացիորեն կյանք էին թունավորում: «Մեզ հաջողվեց կայունացնել ու բացել քաղաքական համակարգը, անհրաժեշտ մակարդակով խորհրդարանական ընտրություններ անցկացնել, ազատականացնել մամուլի ոլորտը»:

Համաշխարհային ճգնաժամի ազդեցությունից հետո էլ, ըստ Հայաստանի նախագահի, «փաստացի ստիպված էինք փոսից դուրս գալ, ստիպված էինք փոխել տնտեսության կառուցվածքն ու բովանդակությունը»: Բարդությունների շարքում նշելով նաեւ 2008-ի օգոստոսյան հարավօսական պատերազմի բացասական ազդեցությունը Հայաստանի վրա՝ Սերժ Սարգսյանը կարեւորել է ղարաբաղյան հարցում խաղաղության պահպանումը, որը «թանկ արժե»: «Ղարաբաղցիներն իրենք պետք է որոշեն ինչ քաղաքական կուրսով պարել», նշել է Սարգսյանը՝ ավելացնելով. «Սա ինքնորոշման պայքարի դասական օրինակ է, եւ չկա գոնե մեկ փաստարկ՝ պարզաբանելու, թե ինչու Արցախի ժողովրդի այդ իրավունքը պետք է մերժվի: Մնացյալ հարցերն ածանցյալ են»:

Այս հարցում Ադրբեջանի կեցվածքի բնութագրական է ներկայացված Սաֆարովին հերոսացնելու եւ հայության ու Հայաստանի հանդեպ ատելություն սերմանելու փաստը: Իսկ թե համանախագահների ձեւաչափում ինչ կարող է ավելին անել Ռուսաստանը՝ Սերժ Սարգսյանը ընդգծել է. «Համոզված եմ, որ բանակցություններում Ռուսաստանի ներկայությունը շատ տաք գլուխներ բավականին սառեցնում է»:

Նախագահի թեկնածու Սարգսյանը չի մեկնաբանել Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի վերջին հայտարարությունը հայաստանայն քաղաքական իրավիճակի մասին, նշելով միայն, որ մարդիկ ուշադիր հետեւում են ընտրապայքարին, որին արժանի քաղաքական գործիչներ են մասնակցում: «Նրանցից ոչ մեկին ինձ թշնամի չեմ համարում, այլ՝ ընդդիմախոս»:

Ինչ վերաբերում է ընտրություններից ելքի կանխատեսումներին՝ նախագահի թեկնածու Սարգսյանն ընդգծել է, որ թեեւ իր առնչությամբ կանխատեսումները բարենպաստ են, բայց դեռ պետք է հաղթել: Միեւնույն ժամանակ, հարցին, թե պաշտոնը երբեւէ լքելու դեպքում ինչով է զբաղվելու Սերժ Սարգսյանը պատասխանել է. «Պաշտոնաթողությունից հետո էլ պետության ղեկավարը պետք է մեծ հասարակական ու պետական պատասխանատվություն կրի: Կարծում եմ՝ ես դեռ ժամանակ ունեմ, որպեսզի որոշակիացվի այդ պատասխանատվության իրագործման ճիշտ ձեւը»:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# Սերժ Սարգսյան. Առավել գնահատելի կլինի, եթե Ադրբեջանն առաջինը ճանաչի Լեռնային Ղարաբաղի անկախությունը

Նախագահ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը երեկ Մասիսում հայտարարել է, որ առաջիկա հինգ տարիներին երկրի կարեւորագույն խնդիրներից մեկը Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ճանաչման հարցն է: Սարգսյանի խոսքերով՝ իր համար առավել գնահատելի կլինի, եթե Ադրբեջանն առաջինը ճանաչի Ղարաբաղի անկախությունը, քանզի դա կնշանակի խնդրի լուծում խաղաղ ճանապարհով: «Մեր նպատակն է, որ այս խնդիրը լուծվի խաղաղ ճանապարհով եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ արդար: Դրա համար ամեն ինչ պետք է անել», ասել է նախագահի թեկնածուն՝ խոստովանելով, որ աշխարհի ամենաերջանիկ մարդը կլինի, եթե իմանա, թե երբ միջազգայնորեն կճանաչվի Արցախի անկախությունը: «Դժվար է ասել, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում աշխարհում պետությունների մի մաս կճանաչի Լեռնային Ղարաբաղի անկախությունը», ասել է Սարգսյանը՝ միաժամանակ չբացառելով, որ կլինեն դեպքեր, երբ մի շարք երկրների խորհրդարաններ, կառավարություններ համապատասխան որոշում կկայացնեն»:

Արտաքին քաղաքականության հաջորդ կարեւորագույն կետը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցն է: Սարգսյանը նշել է, որ չի ցանկանում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հետ առանձնակի հույսեր կապել: Նա հստակեցրել է, որ տարելիցը հանգրվան է՝ այն էլ շատ կարեւոր, անգամ թուրքերն այն անվանել են «հայկական ցունամի», սակայն դա չի նշանակում, որ եթե 2015-ին չճանաչեն Հայոց ցեղասպանությունը, ապա հայ ժողովուրդը պետք է թեւաթափ լինի: «Ընդհակառակը՝ պետք է շարունակել պայքարը եւ չթուլանալ»: Հ. Հ.

# Մաքսային միության ուրվականը՝ ԱՊՀ ինտեգրացիոն գործընթացներում

**«Ռուսաստանը Կովկասում հետաքրքրված է ուժեղ դաշնակից ունենալ ի դեմս Հայաստանի», ռուսաստանյան «Մոսկովսկիե նովոստի» պարբերականին տված հարցազրույցում հայ-ռուսական հարաբերությունների առնչությամբ հայտարարել է Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը՝ ընդգծելով, որ հայաստանյան տնտեսության մեջ ներդրումների քանակով Ռուսաստանն առաջինն է՝ էլ չխոսելով ռազմական ոլորտում համագործակցության մասին:**

**2012-ի օգոստոսի 8-ին Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների որոշմամբ հանձնաժողով է ստեղծվելու՝ Մաքսային միության մեջ Հայաստանի մասնակցության հարցի առնչությամբ, թեեւ Ռուսաստանի հետ ընդհանուր սահման չկա: Բացի ընդհանուր սահմանի բացակայությունից՝ Տիգրան Սարգսյանը նաեւ ընդգծել է, որ հայկական տնտեսության կառուցվածքը զգալի տարբերվում է Մաքսային միության երկրների տնտեսության կառուցվածքից՝ էներգետիկ ռեսուրսների զգալի պաշարով եւ բարձր մաքսային տուրքերով հայրենի արտադրողի պաշտպանության քաղաքականությամբ:**

**«Ընդհանուր առմամբ, Մաքսային միությունում տուրքերը կրկնակի բարձր են Հայաստանում կիրառվողներից», նշել է վարչապետը, որպես եւս մեկ առանձնահատկություն նշելով, որ Հայաստանն ԱՊՀ երկրներից առաջիններից մեկն է դարձել Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ: «Դրա համար անհրաժեշտ է գտնել Մաքսային միության հետ համագործակցության ձեւ եւ առավել արդյունավետ գործիքներ: Միեւնույն ժամանակ, Հայաստանը քանիցս նշել է ԱՊՀ տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացներում իր շահագրգռվածության մասին»:**

**Խոսելով 2012-ին գրեթե 7 տոկոս տնտեսական աճի ու ուժեղ սփյուռքի, ՏՏ ոլորտի զարգացման ու Հայաստանի՝ շախմատային գերտերություն լինելու մասին՝ վարչապետը, պարբերականի խնդրանքով անդրադարձել է նաեւ Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլու այցին ու նրա հետ քննարկումների արդյունքներին: Մասնավորապես, Տիգրան Սարգսյանը նշել է, որ Իվանիշվիլու հետ քննարկվել է Վրաստանով երկաթուղու գործարկման կարեւորությունը:**

**«Վրաստանը հետաքրքրված է Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ», Իվանիշվիլու հետ քննարկումից այսպիսի հայտարարություն է արել Տիգրան Սարգսյանը՝ շեշտադրմամբ, թե վրաց վարչապետի դիրքորոշումը ուրախալի է՝ Ռուսաստանի հետ խնդիրների հանգույցը լուծելու շահագրգռվածությամբ:**

**Վ. Պ.**



# Միջազգային ուսումնասիրության արդյունքներով Orange-ի ցանցը Հայաստանում ճանաչվել է շարժական ինտերնետի որակի առաջատարը

Օրանժ Արմենիայի 3G+ ցանցը ճանաչվել է շարժական ինտերնետի որակի առաջատարը Հայաստանում՝ ըստ գերմանական «P3 Communications» անկախ միջազգային խորհրդատվական ընկերության կողմից Ֆրանս Տելեկոմ-Orange խմբի պատվերով իրականացված ուսումնասիրության արդյունքների: Միջազգային չափանիշներին համապատասխան իրականացված ուսումնասիրության ընթացքում գնահատվել են եվրոպական 8 երկրներում շարժական կապի 26 օպերատորների ցանցերի մի շարք պարամետրեր, ինչպես մուտք ստատիկ վեբ կայքեր՝ ներառյալ YouTube-ի գլխավոր էջ, տեսանյութերի դիտում ինտերնետով, էլեկտրոնային հաղորդագրությունների առաքում եւ ստացում, ֆայլերի վերբեռնում եւ ներբեռնում ու վեբ կայքեր մուտք գործելու համար պահանջվող ժամանակը: Բոլոր փորձարկումներն իրականացվել են շուկայում առկա USB մոդեմներով ու սմարթֆոններով եւ հատուկ ծրագրերով:



Անցյալ տարվա ընթացքում Հայաստանում երկու անգամ իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ վերը նշված բոլոր պարամետրերով Օրանժ Արմենիա ընկերությունն, ընդհանուր արդյունքներով, Հայաստանում առաջարկում է ինտերնետի լավագույն արագություն եւ որակ:

«Վերջին տարիներին մենք ջանք չենք խնայել՝ Հայաստանում կառուցելու եվրոպական լավագույն ցանցերից մեկը: 2012 թ. մեզ հաջողվեց ավելացնել մեր ցանցի թողունակությունը մինչեւ 42Մբ/վ Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում եւ մինչեւ 21Մբ/վ գյուղական համայնքներում: Մեզ համար ուրախալի է տեսնել, որ ցանցի որակի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներն իրենց արդյունքն են ցույց տալիս: Մենք շարունակելու ենք աշխատանքներ տանել մեր ցանցի արագության եւ աշխատանքի որակի կատարելագործման ուղղությամբ՝ այդպիսով մեր ձայնային եւ ինտերնետ ծառայությունների բաժանորդներին առաջարկելով առավելագույն հարմարավետություն» ասաց Օրանժ Արմենիայի գլխավոր տնօրեն **Ֆրանսիս Ժելիբտերը**:

Հայաստանում փորձարկումներն իրականացվել են 2012 թ. հունիսի 13-ից հուլիսի 5-ը եւ նոյեմբերի 19-30-ն ընկած ժամանակահատվածում Երեւան, Գյումրի, Վանաձոր եւ Էջմիածին քաղաքներում՝ հաշվի առնելով, որ բնակչության խտությամբ պայմանավորված՝ նշված քաղաքներում է գեներացվում տրաֆիկի մոտ 80 %-ը: Փորձարկումներն իրականացվել են նշված քաղաքների կենտրոններում, գործարար ու առեւտրային շրջաններում եւ արվարձաններում: Փորձարկումների շուրջ 20 %-ն իրականացվել է շարժման մեջ:

Ընդհանուր ուսումնասիրությունն իրականացվել է 2012 թ. մայիս-օգոստոս եւ 2012 թ. հոկտեմբերի 17-ից մինչեւ 2013 թ. հունվարի 15-ն ընկած ժամանակահատվածում հետեւյալ երկրներում՝ Հայաստան, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Մոլդովա, Լեհաստան, Ռումինիա, Իսպանիա եւ Սլովակիա:

Ուսումնասիրությունն իրականացվել է Orange խմբի պատվերով, միջազգային առաջատար «P3 Communications» անկախ խորհրդատվական ընկերության կողմից: Այս ուսումնասիրությունը հեռահաղորդակցության ոլորտում իրականացվող ուսումնասիրությունների շարունակական արշավի մի մասն է կազմում, որը շեշտը դնում է Orange-ի եվրոպական ներկայության շուկաներում 3G ցանցով շարժական ինտերնետ ծառայություններ մատուցող օպերատորների ցանցերի որակի վրա, եւ թույլ է տալիս համեմատել շարժական կապի 26 օպերատորների ցանցերի ուսումնասիրությունների արդյունքները:

# ArmNe.ws - նոր հայկական հղումներ կարճեցնող համակարգ

Գործարկվել է նոր հայկական ArmNe.ws հղումներ կարճեցնող համակարգ, որը հիմնականում ստեղծվել է լրատվական կայքերի համար եւ ոչ միայն: Կարճված URL հասցեները նույնպես ազդում են որոնողական առաջխաղացման վրա: Google որոնողական համակարգը իր տեսահղորդագրությունում հաստատել է արդեն վաղուց ցանցում շրջանառվող այն ենթադրությունները, ըստ որոնց որոնողական համակարգերը հաշվի են առնում նաեւ հազարավոր սոցիալական ռեսուրսներում օգտագործվող կարճված հասցեները: Որոնողական համակարգերի կողմից այս տիպի հասցեների ճանաչումն ու ինդեքսացումը, ըստ շրջանառվող լուրերի, ազդում են վեբ-կայքի որոնողական առաջխաղացման եւ որոնողական դասակարգման վրա:

Տեսանյութ: http://youtu.be/QMkltd6dZzU

# Կրակոցներից հետո

## Ի՞նչ կորոշի Հայրիկյանը

Յունվարի 31-ին Տպագրիչների փողոցում ինչած կրակոցի արձագանքը (բառի բուն իմաստով) քանի գնում, այնքան ահագնանում է, քանի որ նրա ենթատեքստերը օր օրի ավելանում են հենց մեր վերլուծաբանների թեթեւ ձեռքով, կարելի է ասել՝ ճուտ են հանում:

Հետեւած բազմաթիվ վերլուծական հոդվածների քննախուզումը (որոնք սփռվեցին եւ ամեն օր սփռվում են վիրտուալ տարածքում՝ Պարույր Հայրիկյանի դեմ մահափորձի ու նրա քաղաքական, աշխարհաքաղաքական եւ էլ ինչ գիտեմ ինչ տեսակի հետեւանքների վերաբերյալ ենթադրությունների եւ վարկածների տեսքով) մեր առաջ պարզում է շփոթված, չկողմնորոշվող ու վերլուծաբանների ամենաանհեթեթ ենթադրությունների սարդոստայնում հայտնված հայ հանրության անհրազեկ, խղճելի եւ զանազան հովերին տրվող վիճակ: Իհարկե՝ ոչ իր մեղքով: Մեղավորները բազմաթիվ են:

Պարույր Հայրիկյանի՝ իր դեմ ուղղված մահափորձին ռուսական իմպերիալիզմի եւ սովետական ԿԳԲ-ի խառնված լինելու վերաբերյալ կասկածի նստվածքը մնաց: Անգամ մտածում էինք, որ շոկի ենթարկված քաղաքական գործչի՝ տաք վիճակում, առանց հետաքննության արդյունքին սպասելու արած ենթադրությունը կարող էր միջպետական սկանդալի հիմք դառնալ, ու սպասում էինք հատկապես հայկական կողմի պաշտոնական արձագանքին: Սակայն դա չեղավ կամ առնվազն մնաց զանազան մասնավոր կարծիքների մակարդակում: Իհարկե, չենք ասում՝ դա հնարավոր չէ: Սակայն և՛ Արեւմուտքին, և՛ Ռուսաստանին մեղադրելիս մեր ձեռքին ոչ թե ենթադրություններ, այլ ապացույցներ են պետք: Ոչ թե կարծիքներ, որ ամեն օր տարածում են Հայրիկյանից էքսկլյուզիվ պոկելու համար հերթ կանգնած աղջնակ կամ տղայիկ լրագրողները, այլ անհերքելի փաստեր: Կամ՝ հարցնում են բոլոր պատահածների կարծիքները, թե ո՞վ կարող էր դա անել: Օ, ինչպիսի՜ կարծիքներ: Իսկ ռուսական կողմից էլ մի թույլ հակադարձում արեց Բորդյուժան՝ մահափորձ չէ, պետք է հետաքննել ու պարզել, ու ռուսական տարբեր վերլուծաբաններ մերոնցից ավելի գլուխ պտտեցնող վարկածներ ֆռռացրին՝ ընդհուպ «Հայաստանն այս տարածաշրջանի Սարաեւո», մերոնց ասածից առավել:


Թեկնածուները սպասում են Հայրիկյանի վճռին:
ՖՈՏՈԼՈՒՐ

Հայրիկյանի նախկին կուսակից Արամ Հարությունյանը երեկ Հայրիկյանի հայտարարությունը քաղաքական ավանտյուրա համարեց՝ նշելով, որ իշխանությունները պետք է ասեին, թե դա մասնավոր կարծիք է: Չնայած Ա. Հարությունյանը աչքներիս լույսը չէ, բայց նրա ասածին դժվար է չհամաձայնել:

Դե, իսկ մերոնց մեծ մասի վերլուծությունների՝ երբեմն շատ հեռուն գնացող եզրակացությունները փաստորեն արվում են, այնուամենայնիվ, չտիրապետելով ողջ տեղեկատվությունը տեղի ունեցածի վերաբերյալ, քանի որ նախաքննության գաղտնիք լինելը թույլ չի տալիս տիրապետել տեղի ունեցածի մանրամասներին ու առավել առարկայական վարկածներ շրջանառել՝ չխորացնելով հասարակության մեջ առկա անվստահությունն ամենի ու բոլորի հանդեպ ու նոր սնունդ չտալով ամենաանհավանական վարկածներին: Էլ Եվրասիական կամ Մաքսային միությանը Հայաստանի հակադրվելու արդյունք, էլ Արեւմուտք-Ռուսաստան՝ Հայաստանի (Ղարաբաղի) գործոնով դիմակայության բալաս, էլ Իրանի հանդեպ պատժամիջոցների կիրառման պարագայում Ռուսաստանի ակտիվացման հնարավորություն Ղարաբաղում՝ այս համատեքստում տեղի ունեցած տեռոր, այս բոլորի արդյունքում՝ անկայուն քաղաքական իրադրության հարկավորություն Հայաստանում: Եվ որ... սպասվում են քաղաքական հատկանիշներով սպանություններ, Աստված չանի: Որ անկախության խորհրդանիշ Հայրիկյանի դեմ ոտնձգությունը ոտնձգություն է Հայաստանի պետականության դեմ:

Այս բոլորը պարզաջրելու, բոլոր հարցադրումներին պատասխանելու մեկ ձեւ կա՝ իրավական: Եթե իրավապահ համակարգը, ազգային անվտանգության մարմինները չեն կարողացել գտնվել այն մակարդակի վրա, որ ապահովեին թեկնածուների անվտանգությունը, կանխեին ահաբեկչությունը՝ այդպիսով պետության անվտանգության, ասել է թե՝ անվտանգ, անխոչընդոտ ընտրական գործընթացի ապահովման խնդիր լուծելով, ուրեմն հիմա պետք է մեղքերը քավեն, պետք է հնարավորինս արագ բացահայտեն հանցագործությունը՝ թույլ չտալով լեգենդների սնուցումը, այդպիսով անվտանգության երաշխիք ստեղծեն բոլորի համար՝ երկրի, ժողովրդի, նախագահի ու նախագահի թեկնածուների: Մնացածը ցնդաբանություն է: Պետք է հասկանալ, թե ո՞վ է թշնամին եւ ում դեմ պետք է ուղղվի հակասլաքը, ոչ թե ողջ աշխարհը պետք է թշնամի հայտարարել Հայաստանին: Թե չէ՝ ամեն աղջնակ լրագրող, ինչպես երեկ տեղի ունեցավ, կսկսի մեր քաղաքական գործիչներին այս կարգի սարսափազդու հարց տալ. «Կատարվածը ներքին թուրքի ձեռքի գո՞րծ է»:

Իսկ անձամբ Պարույր Հայրիկյանին, որի ձեռքում է հայտնվել փաստորեն մեր երկրի ապագայի վերաբերյալ շատ կարեւոր որոշում ընդունելու հնարավորությունը, կուզեինք խնդրել, եւ նույնիսկ լրագրողների գոնե այն մասի անունից, որոնց հետ զրուցել ենք, չհետաձգել ընտրությունները: Լրագրողներն ամեն օր հանձն կառնեն գալ հիվանդանոց ասուլիսի, մենակ թե ընտրությունները չհետաձգվեն:

Գլխավորն, իհարկե, այս պահին Հայրիկյանի որոշումն է: Փաստորեն այս պահին այս երկրում նախագահի ընտրությունը, համենայն դեպս ընտրարշավի հետագա ընթացքի մասով կախված է Հայրիկյանի՝ ՍԴ դիմելու որոշումից: Լավ է, որ նա նախապես բացառել է աջուահյակ լսվող նոր ընտրությունների պահանջները (այդ թվում՝ նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանի կողմից), սակայն եթե առողջությունը ներ՝ կուզեինք, որ սովորաբար սթափ եւ Հայաստանի ապագայի անկեղծ մտահոգությամբ (գոնե մեր տպավորությամբ) այս գործիչը նաեւ ուժ գտներ հաղթահարելու առողջական խոչընդոտը ու ընտրարշավը երկու շաբաթով հետաձգելու որոշմանը եւս կողմ չլիներ, քանի որ, վկա է Աստված, ոչ ոք չի կարող երաշխավորել, թե աշխարհաքաղաքական տարբեր խաղերի մեջ ակամա ներքաշված Հայաստանի հետ կապված ի՞նչ նոր խոչընդոտ կարող է ծագել երկու շաբաթ հետո:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Հ. Գ. - Ի դեպ, երեկ մտորելու նյութ տված այս տեղեկատվությունը շատ հետաքրքրական է. Վազգեն Սարգսյանի եղբայր Արմեն Սարգսյանը սպառնում է Սերժ Սարգսյանին: Հավանաբար Սերժ Սագսյանն ընտրվելուց հետո կսկսի քաղաքական դաշտում սուր անկյունները հարթեցնելու մի այնպիսի գործընթաց, որը չի եղել Հայաստանում վերջին քսան տարում: Սա երեւում է նաեւ «Օգոնյոկ» ռուսական ամսագրին տված Սերժ Սարգսյանի հարցազրույցի մի շարք պահերից, եւ հատկապես՝ Ռոբերտ Քոչարյանի՝ իր կառավարման ժամանակի վերաբերյալ քննադատությունը չմեկնաբանելուց: Քաղաքական դաշտի վերաձեւումների մասին մեր կանխատեսումների մասին՝ հաջորդ անգամ:*

## Պարույր Հայրիկյանն այսօր որոշում կկայացնի

*1-ին էջից*

Կատարվածի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ ՔՕ 34-305 հոդվածի՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության փորձ կատարելու հատկանիշներով: Ստեղծվել է համատեղ օպերատիվ-քննչական խումբ, որտեղ ընդգրկված են ՀՀ ոստիկանության եւ ԱԱԾ աշխատակիցները: Դեպքի վայրում հայտնաբերվել է 7.62 տրամաչափի 1 գնդակ:

Մինչ քաղաքական ու հասարակական գրեթե բոլոր շրջանակներում ու նախագահի բոլոր թեկնածուների շտաբներում սպասում են Հայրիկյանի որոշմանը, քաղաքագետներն ու մտավորականները շարունակում են քննարկել՝ ո՞վ, ինչո՞ւ եւ ինչի՞ համար դա կատարեց: Որ կատարվածի պատասխանատուներին պետք է փնտրել դրսում, դեռեւս երկու օր առաջ հայտարարել էր Հայրիկյանը: Նա վստահ է, որ մահափորձի մեղավորը ռուսական իմպերիալիզմն է:

Գրող **Վարդան Դեւրիկյանը** համոզված է, որ կրակել են ոչ թե նրա համար, որ նախագահի թեկնածու է, այլ որ նա անկախության խորհրդանիշ է եւ համարվում է պետական դեմք:

Դերասան **Երվանդ Մանարյանին** զարմացնում է կրակողի եւ պատվիրատուի ապաշնորհ վիճակը: Դերասանը չգիտի, թե Հայրիկյանի դեմ ինչո՞ւ են մահափորձ կատարել եւ ովքե՞ր, սակայն նրան ապշեցնում է, որ կրակողն այդքան ապաշնորհ է եղել: «Երեւի ինչ-որ ապաշնորհ դերասան է եղել կրակողը», կատարվածը կատակի է տալիս դերասանը:

Առանց կատակի, քաղաքագիտական լուրջ վերլուծությունից հետո, քաղաքագետ **Սերգեյ Մինասյանը** շեշտում է, որ մահափորձից հետո Հայրիկյանի համար ավելի ձեռնտու կլիներ երկու շաբաթով չերկարաձգել ընտրությունները: «Միգուցե Հայրիկյանի համար նպատակահարմար է չհետաձգել ընտրությունները, քանի որ այն ինֆորմացիոն դաշտը, որի մեջ նա գտնվում է, երկու շաբաթից կփոխվի, եւ նպատակահարմար կլինի ավելի արդյունավետ ձեւով օգտագործել ստեղծված իրավիճակը»: Քաղաքագետը չգիտի, թե կոնկրետ ո՞ւմ էր ձեռնտու նման քայլ կատարելը, միաժամանակ նա վստահ է, որ Հայաստանի լուրջ քաղաքական գործիչները հաստատ նման բան չէին կատարի:

Հայրիկյանի հետ կատարվածին երեկ կրկին անդրադարձել է նախագահ, նախագահի թեկնածու **Սերժ Սարգսյանը**: «Մենք շարունակում ենք մեր ընտրարշավն, ու հաճելի է տեսնել, թե ինչպես է մեր գործընկերը արագ ապաքինվում, չնայած այն զազրելի հանցագործությանը, որը, իմ համոզմամբ, ուղղված էր ոչ միայն Պարույր Հայրիկյանի, այլեւ մեր պետականության առաջընթացի դեմ: Մեզնից յուրաքանչյուրը սա պետք է հասկանա, եւ մենք պետք է շարունակենք անխափան եւ հստակ աշխատանք, որովհետեւ այդ հանցագործության նպատակը հենց դա է՝ խափանել ընտրությունների բնականոն ընթացքը: Այս իրավիճակում պետք է գործի միայն ՀՀ Սահմանադրությունը», երեկ հայտարարել է նա: Նախագահի մյուս թեկնածուները Սերժ Սարգսյանի օրինակով շարունակել են ընտրարշավը: Անդրիաս Ղուկասյանը հայտարարել է, որ անկախ հանգամանքից՝ ընտրությունները երկու շաբաթով կհետաձգվեն, թե ոչ, ինքը շարունակելու է հացադուլն ու «շինծու ընտրությունների» դեմ պայքարը: Ի դեպ, երեկ լրագրողների ուղեկցությամբ Ղուկասյանը կարճ ժամանակով լքել է ԳԱԱ շենքի բակը, գնացել է տուն եւ լողացել:

## Քաղցկեղի ցուցանիշն աճում է

*1-ին էջից*

**Այստեղ կրծքագեղձի քաղցկեղով հիվանդացության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվում է 41-60 տարեկան տարիքային խմբում:**

**Հայաստանի Ուռուցքաբանության ազգային կենտրոնի տվյալներով՝ մեր երկրում 100 հազար մարդուց օնկոլոգիկ հիվանդ է 245-ը, իսկ վերջին 20 տարիներին գրանցվել է քաղցկեղով հիվանդների թվի կրկնակի աճ: Ու անգամ նման բարձր ցուցանիշի դեպքում՝ կանխարգելիչ միջոցներն ու ֆինանսավորումը բավարար չեն: Եվ մարդիկ հիվանդանոց դիմում են միայն այն ժամանակ, երբ արդեն ունեն օնկոլոգիկ հիվանդություն, որն էլ գտնվում է բավականին բարդացած փուլում, մինչդեռ ուռուցքները վաղ փուլերում հայտնաբերելիս հնարավոր է հաջողությամբ բուժել հիվանդությունը: Հատկապես կրծքագեղձի քաղցկեղին բնորոշ է նախակլինիկական երկարատեւ փուլը, եւ որքան վաղ հայտնաբերվի այն, այնքան բարձր կլինի բուժման արդյունավետությունը: Հետեւաբար, հարկավոր է տարեկան 2 անգամ գնալ պրոֆիլակտիկ ստուգումների:**

**Ընտանիքի պլանավորման ու սեռական առողջության կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Գագիկ Բեգլարյանը հավաստիացնում է բոլոր կանանց, որ կոնկրետ մամոգրաֆիկ ստուգումներն անվտանգ են ու չեն վնասում կրծքագեղձին, եւ անհրաժեշտ է, որ կանայք 6 ամիսը մեկ անցնեն մամոգրաֆիկ հետազոտություն:**

**Բնության եւ հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս Ռաֆայել Մելիք-Օհանջանյանը հավելում է՝ կրծքագեղձի քաղցկեղը եթե հայտնաբերվում է նախնական շրջանում, ապա 80 տոկոսը դեպքերի լինում է բուժելի:**

**Գագիկ Բեգլարյանը կանանց զգուշացնում է, որ շատ դեպքերում բարորակ ու չարորակ ուռուցքներ կարող են հանգեցնել նաեւ աբորտները (արհեստական վիժումները): Հարցին՝ իսկ հայերը հաճա՞խ են դիմում աբորտների աղջիկ պտղից ազատվելու համար, քանի որ գերադասում են տղա ունենալ, Գագիկ Բեգլարյանը պատասխանում է, որ մեզանում երեխայի սեռը խնդիր չէ, հատկապես երբ ծնվում է առաջին կամ երկրորդ երեխան, սակայն միտում կա, որ գերադասում են տղա ունենալ:**

**Հ.Գ. Երեկ «Ազդակ» ակումբում «Իրավունք» թերթն իր կողմից պատվոգրեր հանձնեց Գագիկ Բեգլարյանին ու Ռաֆայել Մելիք-Օհանջանյանին՝ ճանաչելով նրանց լավագույն գործիչներ գիտության ու առողջապահության բնագավառներում:**

# ԱՄՆ-ը Մոսկվային առաջարկում է հարաբերությունների կարգավորում



ԱՄՆ-ը Ռուսաստանին առաջարկել է երկկողմ հարաբերությունները վերադարձնել «բնական հուն» եւ խորացնել համագործակցությունն այն ոլորտներում, որտեղ երկու երկրների դիրքորոշումները համընկնում են: «Կոմերսանտ» թերթը փետրվարի 4-ին հաղորդեց, որ ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենը եւ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը այդ հարցն են շոշափել Մյունխենում՝ անվտանգությանը նվիրված ամենամյա միջազգային կոնֆերանսում:

Հանդիպումից հետո Լավրովը հայտարարել է, որ մի շարք հարցերում ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի շահերը «համընկնում են»:

Դրա օրինակներից մեկը պայքարն է զանգվածային բնաջնջման զենքի տարածման դեմ: ՌԴ իշխանությունները որոշել են չերկարաձգել Նանն-Լուգարի ծրագրի գործողությունը, որն ավարտվում է 2013-ի հունիսին: Ռուսաստանն ամերիկյան փողերով վերացրել է ավելորդ միջուկային մարտագլխիկները եւ հնացած ռազմավարական հրթիռները: Ծրագիրը չի երկարաձգվում, քանի որ Մոսկվան օժանդակության կարիք այլեւս չունի:

Մյունխենում «Կոմերսանտի» աղբյուրը պատմել է, որ Ռուսաստանը պատրաստ է այդ ոլորտում ԱՄՆ-ի հետ ստորագրել համագործակցության նոր համաձայնագիր, «եթե դա հիմնվի իրավահավասարության վրա եւ համապատասխանի արդի իրողություններին»:

Նոր համաձայնագրի մանրամասնությունները քննարկելու նպատակով փետրվարին Մոսկվա կայցելի ԱՄՆ պետքարտուղարի ավագ տեղակալ Ռոուզ Գետեմյուլլերը:

Մոսկվա-Վաշինգտոն հարաբերություններում վերջին տարիներին լարվածություն է տիրում: Երկու երկրները չեն կարողանա համաձայնության հասնել մասնավորապես Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղաբաշխման եւ Սիրիայի իրադրության հարցերում: Հարաբերությունները հատկապես սրվեցին այն բանից հետո, երբ 2012-ին ԱՄՆ-ը ընդունեց ռուսաստանցի մի շարք պաշտոնյաների նկատմամբ պատժամիջոցներ նախատեսող «Մագնիտսկու օրենքը», իսկ ՌԴ-ում ի պատասխան ընդունեցին օրենք, որն ամերիկացիներին արգելում է որդեգրել ռուսաստանցի երեխաներին եւ սահմանափակում է ոչ կառավարական կազմակերպությունների աշխատանքը:

# Խփել չի կարելի թռչել. ո՞վ ճիշտ տեղում կդնի «ստորակետը»

*1-ին էջից*

Այսպիսով, Արազ Ազիմովը հավաստիացնում է, որ Ադրբեջանը քաղաքացիական օդանավ չի խոցելու, այլ իրականացնելու է Չիկագոյի կոնվենցիայի՝ իր իսկ կողմից ճանաչված կանոնները: Այսինքն, եթե դեպի Ստեփանակերտ քաղաքացիական օդանավ թռչի, ապա Ադրբեջանը, համաձայն Չիկագոյի կոնվենցիայի, «կապ է հաստատելու օդանավի հետ եւ, բացատրելով, որ այն հայտնվել է «իր օդային տարածքում», պահանջելու է վերադառնալ ելման օդանավակայան, իսկ եթե դա տեղի չունենա, ապա ձեռնարկելու է հարկադիր վայրէջքի գործողություններ»:

Գործնականում անհնար է թե՛ մեկը, թե՛ մյուսը: Արցախյան քաղաքացիական օդանավի հետ կապ հաստատելու համար Ադրբեջանը եւ ԼՂՀ-ն պետք է փոխանակեն տեխնիկական տեղեկություններ: Այսինքն՝ շփման մեջ մտնեն համապատասխան գերատեսչությունների մակարդակով: Իսկ պաշտոնական Բաքուն այդպիսի հեռանկարից փախչում է ինչպես կրակից: Իսկ քաղաքացիական օդանավին հարկադիր վայրէջքի տանելու համար ադրբեջանական ռազմաօդային ուժերը «պետք է հատեն զորքերի շփման գիծը»: Մի բան, որ անգամ երեւակայությունից է դուրս:

Ազիմովը նաեւ անդրադարձել է խնդրի մարդասիրական կողմին: Նրա կարծիքով, ԼՂՀ-ում «ապրում է մոտավորապես 130 000 հայ, որոնց կարիքների բավարարման համար բավարար է Լաչինի միջանցքի օգտագործումը, որտեղով օրական առնվազն 70 բեռնատար մեքենա է երթեւեկում: Ուստի մարդասիրական նպատակներով օդային տարածք բացելու հարկ չկա»: Ադրբեջանի փոխարտգործնախարարը, սակայն, իր «բարձրության» վրա չէր լինի, եթե երկու հիմար նկատառում եւս չաներ: Մի դեպքում նա կարծում է, որ «օդանավակայանի գործարկումը կլինի անարգանք Խոջալուում զոհվածների հիշատակի հանդեպ»: Սա ակնհայտ շահարկում է: Քանի որ նախ խոջալուցիները զոհվել են օդանավակայանից առնվազն մեկուկես տասնյակ կմ հեռավորության վրա՝ Աղդամ քաղաքի մոտ, ճշգրտված չէ՝ ո՞ւմ կողմից (ստույգ տվյալներով՝ ադրբեջանական զորամիավորումների), երկրորդ, եթե առաջնորդվենք զգայական չափանիշներով, ապա Բաքվի օդանավակայանը պետք է փակել անհապաղ, որովհետեւ 1990 թ. հունվարյան վայրագությունների օրերին հազարավոր հայեր այնտեղ ենթարկվել են անլուր անարգանքի եւ նվաստացումների, ինչի համար Ադրբեջանը դեռեւս քաղաքակիրթ աշխարհից ներողություն չի խնդրել:

Ազիմովի երկրորդ հիմարությունը նույնպես ցցուն է. նա կարծում է, որ «օդանավակայանը փորձում են գործարկել այլ նպատակներով, որպեսզի Ղարաբաղ բերվի ռազմական տեխնիկա...»: Թե քաղաքացիական օդանավն ինչպե՞ս կարող է «ռազմական տեխնիկա տեղափոխել»՝ այլ հարց է: Ազիմովի խոսքի անտրամաբանականությունն այն է, որ իր իսկ ասելով՝ «Լաչինի միջանցքով օրական 70 բեռնամեքենա է երթեւեկում», եւ ցանկության դեպքում դրանք կարող են նաեւ ռազմական բեռներ փոխադրել:

Խնդրին երեկ անդրադարձել է նաեւ Իլհամ Ալիեւին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը: Խոսելով դարձյալ քաղաքացիական օդանավ խոցելու «իրավունքից», այդ հաստատության փորձագետը ստիպված խոստովանել է, որ այդ դեպքում «ոչ ոք չի հիշի Չիկագոյի կոնվենցիայի մասին»: Այսինքն՝ օդանավ խոցելու դեպքում Ադրբեջանը միջազգայնորեն կդատապարտվի: Այդ դեպքում ո՞րն է «ելքը»: Ադրբեջանցի փորձագետն առաջ է քաշել «ուղղակի օդանավակայանին հարվածելու սցենարը»: Ինչպես ժողովուրդն է ասում՝ «աչքից էլ ազատվել, աչքացավից էլ»: Բայց չէ՞ որ դա հավասարազոր է ռազմական գործողությունների վերսկսման: Անկասկած է, որ եթե Ադրբեջանը թիրախ դարձնի Ստեփանակերտի օդանավակայանը, ապա դրան կհետեւի ԼՂՀ առնվազն համարժեք պատասխանը: Այդ դեպքում էլ Ադրբեջանը միջազգային քննադատության կենթարկվի՝ դրանից բխող հետեւանքներով:

Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման հարցում, այսպիսով, պաշտոնական Բաքվի վերաբերմունքը կարելի է անվանել «խփել չի կարելի թռչել» անորոշությամբ: Ո՞վ ճիշտ տեղում կդնի «ստորակետը» եւ կսահմանի՝ «խփել չի՛ կարելի, թռչե՛լ»: Միջազգային հանրությո՞ւնը՝ ի դեմս ԵԱՀԿ Մխ համանախագահ երկրների, թե՞ հայկական կողմը: Գուցե՝ ադրբեջանական իշխող վերնախավի բանականությո՞ւնը: Ակնհայտ է միայն, որ այդ հարցում Ադրբեջանի ցուցադրած «սկզբունքայնությունը» հիմնականում քարոզչա-դիվանագիտական բնույթ ունի:

***Հ. Գ.*** *Չիկագոյի կոնվենցիայի ո՞ր հոդվածի «հիման վրա է» Ադրբեջանը Թուրքիայով միջնորդավորված թռիչքներ իրականացնում դեպի միջազգայնորեն չճանաչված «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետություն»: Եթե Արազ Ազիմովը պատասխան գտնի այս հարցին, ապա նրա հետ կարելի է խոսել Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման «ոչ օրինականության» թեմայով:*



# Իսլամիստները սպառնում են Մերկելին եւ Ռայխսթագին



**Գերմանացի հայտնի իսլամիստներից մեկը համացանցում տեղադրած տեսագրության մեջ սպառնում է սպանել կանցլեր Անգելա Մերկելին եւ պայթեցնել Ռայխսթագը: «Մենք ուզում ենք մեռած տեսնել Օբամային եւ Մերկելին», հայտարարում է սալաֆիստ Աբու Ազզամը, որը արդեն 1 տարի ապրում է Եգիպտոսում: Այնտեղ նրա դաշնակիցն է տեղացի սալաֆիստ արմատական Մուհամմեդ Մահմուդը, որը հայտնի է նաեւ Աբու Ուսամա ալ Ղարիբ անունով: «Ալ Ղաիդայի» հետ կապված 5 տարվա բանտարկության դատապարտված այդ էմիրը իսկական մղձավանջ է դարձել Գերմանիայի անվտանգության ծառայությունների համար, նշում է «Ֆիգարո» թերթը:**

**Աբու Ազզամը իր հերթին սպառնում է Բեռլինում կրկնել սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունները: Խոսքը մասնավորապես խորհրդարանի տորին պալատի նստավայր Ռայխսթագի մասին է:**

**«Մեր զորքն արդեն դիրքավորված է: Դուք կպայթեցվեք, եւ ձեր գլուխները կընկնեն: Օ՜, Ալլահ, տո՛ւր գերմանացի ժողովրդին այն, ինչին նա արժանի է», գրում է Աբու Ազզամը:**

**Մալիում ֆրանսիական զորքին Գերմանիայի ռազմական գերատեսչության ցուցաբերած օգնությունը հերթական առիթն է, որպեսզի իսլամիստները սպառնան Գերմանիային: «Ֆիգարոյի» տվյալներով, գերմանացի 58 սալաֆիստներ արդեն գործում են Եգիպտոսում: Նրանցից 10 վերադարձել են Գերմանիա: Մյուսները պատրաստություն են անցնում Լիբիայում, Սոմալիում, Սիրիայում, Եմենում, Մալիում: Գերմանիայի հատուկ ծառայությունների տեղեկությունների համաձայն, նրանք «Ալ Ղաիդայից» հրաման են ստացել վերադառնալ Գերմանիա եւ խմբեր կազմել «կարեւոր թիրախներին» հարվածելու նպատակով:**

**Գերմանիայում, որտեղ 4 միլիոն մահմեդական է ապրում, արդեն գործում են առնվազն 4 հազար արմատական սալաֆիստներ: Իշխանությունները փորձում են ինչ-որ ձեւով վերահսկել նրանց գործունեությունը:**

# «Իսմայիլ Բեշիքչի» հիմնադրամ Թուրքիայում

Իսմայիլ Բեշիքչին հանրահայտ թուրք սոցիոլոգ է: Ունի քրդական հարցին եւ թուրքական իրականությանը նվիրված ավելի քան 30 աշխատություն: Նրա աշխատությունները թարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով, ներառյալ՝ ճապոներեն: Սակայն դա չի խանգարել, որ դրանք, բացառությամբ երկուսի, արգելվեն Թուրքիայում եւ տասնյակ տարիներ բանտարկվի հեղինակը:

Հաշվի առնելով նրա անձնուրաց պայքարը, մի խումբ մտավորականներ որոշել են «Իսմայիլ Բեշիքչի» հիմնադրամ ստեղծել Թուրքիայում: Փետրվարի 3-ին նախաձեռնողները հավաքվել են Մերսինում, որտեղ էլ տեղի է ունեցել հիմնադրամի շնորհանդեսը: Արարողությունից հետո Բեշիքչին ելույթ է ունեցել մասնակիցների առջեւ, առանձնահատուկ տեղեկություններ է հաղորդել Թուրքիայի պատմության մասին: Նա ասել է, որ երկրում քրդական իրողությունը տասնյակ տարիներ պետականորեն քողարկվել է: Այնուհետեւ անդրադարձել է երիտթուրքերի Իթթիհաս վե Թերաքքի կուսակցության ընդունած որոշումներին, որոնք են.

1. Երկրից արտաքսել հույներին:

2. Բնաջնջել հայերին, ասորիներին եւ նեստորականներին: Բնաջնջումը գործնականորեն ավարտվեց 1916-ին: Դրանց արդյունքում՝ ա) հույների եւ հայերի ունեցվածքի հաշվին ստեղծվեց մեծահարուստների թուրքական խավ, բ) քուրդ ցեղապետերը ազգային ինքնությունն ուրանալու պայմանով սեփականացրին հայերի եւ ասորիների կալվածքները:

3. Թուրքացնել քրդերին:

4. Սուննի մահմեդական դարձնել ալավիներին:

Իթթիհասականների վերջին երկու որոշումները ուժի մեջ են եղել նաեւ քեմալականների հիմնադրած Թուրքիայի Հանրապետությունում:

Հ. Ծ.

# Փարիզում կանանց թույլատրեցին տաբատ կրել

Անցյալ շաբաթավերջին Փարիզի քաղաքապետարանը ի վերջո չեղյալ հայտարարեց 1800 թվականին ընդունված այն օրենքը, որը կանանց արգելում է տաբատ կրել: Մինչ այդ տվյալ օրենքը խախտած գեղեցիկ սեռի ներկայացուցիչները ենթակա էին բանտարկության, հաղորդում է Europe 1 հեռուստաալիքը:

Քաղաքային իշխանությունները ավելի վաղ ընդունել էին երկու ուղղում, որոնք կոչված էին դյուրացնելու նորաձեւության հետեւորդ կանանց վիճակը: 1892-ին եւ 1909-ին օրենքում կատարված մեղմացումները փարիզուհիներին թույլատրում էին տաբատ հագնել ձիավարության ժամանակ կամ հեծանիվ քշելիս:



Շաբաթավերջին Փարիզի քաղաքապետարանը լույս ընծայեց պաշտոնական տեղեկագիր, որտեղ ասվում է, որ «1800 թվականի օրենքը ճանաչվում է Սահմանադրությամբ ամրագրված տղամարդկանց եւ կանանց իրավահավասարության սկզբունքներին անհարիր»:

ԺՈՂՈՎՐԴԻ ՍԻՐԵԼԻՆ

## Հուշ-երեկո՝ նվիրված Ֆլորա Մարտիրոսյանի 56-ամյակին


ՖՈՏՈԼՈՒՐ

Այսօր, փետրվարի 5-ին, Նարեկացի արվեստի միությունում տեղի կունենա Ֆլորա Մարտիրոսյանի 56-ամյակին նվիրված հուշ-երեկո: Այս մասին տեղեկանում ենք ՆԱՄ-ից: Ծրագրում հնչելու է Ֆ. Մարտիրոսյանի երգացանկի հատընտիր կատարումներից, ցուցադրվելու են համերգային բացառիկ կադրեր:

Ֆլորա Մարտիրոսյանը ծնվել է 1957 թ. փետրվարի 5-ին Գյումրիում: Դպրոցին զուգահեռ ավարտել է նաեւ Գյումրու Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցը: 1973-ից սկսել է հանդես գալ «Հանրապետական» ռադիոյով եւ հեռուստատեսությամբ: Այնուհետեւ՝ ուսումը կոնսերվատորիայում շարունակելու համար տեղափոխվել է Երեւան:

1978-ին Գերմանիայի Համբուրգ քաղաքում կայացած միջազգային փառատոնի մրցանակակիր. առաջին միջազգային հաջողությունն էր: Այնուհետեւ Գուսան Աշոտի «Ծովասարիկը» Ֆլորա Մարտիրոսյանի կատարմամբ 15 տարի շարունակ ճանաչվել է տարվա լավագույն երգ: Հյուրախաղերով հանդես է եկել աշխարհի ավելի քան 60 երկրներում: 1989-ին ամուսնացել է, ունի 2 երեխա:

1991-ին մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Հայրենիք է վերադարձել 1995-ին եւ շարունակել իր երաժշտական գործունեությունը:

1997-2001 թթ. ղեկավարել է Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցը:

2002-ին Լոս Անջելեսում՝ Հոլիվուդ եւ Բըբենկ քաղաքներում հիմնել է Կոմիտասի անվան երաժշտական դպրոցները, որոնք շատ կարճ ժամանակահատվածում մեծ ճանաչում են բերել անվանի երգչուհուն: 2006-2007-ին առաջին անգամ Հայաստանում նախաձեռնել եւ անցկացրել է «Կոմիտաս» համահայկական միջազգային մրցույթը, որին մասնակցել է շուրջ 2000 հայ երեխա՝ Հայաստանից եւ այլ երկրներից:

2007-ին հիմնել է «Artists for peace» (Արվեստագետներ հանուն խաղաղության) բարեգործական հիմնադրամը, որի կազմում ընդգրկվել են աշխարհահռչակ երգիչ-երգչուհիներ, հոլիվուդյան դերասներ՝ արվեստի ուժով իրենց ձայնը միացնելու Հայոց ցեղասպանությունը եւ աշխարհում տեղի ունեցած նման կարգի ոճրագործություններին ո՛չ՝ «Այլեւ երբեք» ասելու համար:

Ֆ. Մարտիրոսյանը մահացավ 2012-ի նոյեմբերի 20-ին:

## Նյու Յորքում ցուցադրվել է «Ժողովրդի թշնամին» ֆիլմը

Նյու Յորքից ստացված մամլո հաղորդագրությունը տեղեկացնում է, որ «Համազգային կրթական եւ մշակութային ընկերության» կազմակերպությամբ հունվարի 27-ին Սբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու Փաշայան դահլիճում տեղի է ունեցել ռեժիսոր եւ պրոդյուսեր **Զարեհ Ճգնավորյանի** «Ժողովրդի թշնամի: Հայերը հիշում են ստալինյան շրջանի տեռորը» վավերագրական ֆիլմի ցուցադրությունը:

Օրվա հանդիսավար, Համազգայինի Նյու Յորքի մասնաճյուղի ատենապետ դոկտ. **Արա Գաբրիելյանը** ներկայացրել է ֆիլմի ռեժիսորին, ասելով, որ նա ծնվել է Ֆարգոյում (Հյուսիսային Դակոտա, ԱՄՆ), բայց մեծացել եւ շնորհիվ իր հոր՝ երգահան եւ դիրիժոր Լորիս Ճգնավորյանի շրջագայությունների, կոսմոպոլիս մթնոլորտում, ապրելով Իրանում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում եւ Հայաստանում: Ավարտել է (1992-ին) Նյու Յորքի համալսարանի արվեստի բաժինը:

**Էրիկ Պողոսյանի** ներածականով ֆիլմը արդեն մեծ ճանաչում է ձեռք բերել միջազգային շրջանակներում: Ամերիկյան հայտնի «Նեշնըլ ջեոգրաֆիկ մեգեզին» հանդեսը Հայաստանի մասին երեք «պարտադիր» ֆիլմերի ցուցակում է ընդգրկել Փարաջանովի «Նռան գույնը» եւ Էգոյանի «Արարատ» ֆիլմերի հետ:

Արխիվային նյութերի վրա հիմնված ֆիլմը բացվում է Ստալինի քաղման արարողությամբ, որի ընթացքում հնչում է բռնապետի խոսքը. «Մեկ մարդու մահը ողբերգություն է, միլիոնների մահը՝ սոսկ վիճակագրություն»:

Դիտունուք րոպե տեւողությամբ ֆիլմը մոտ 200 հարցազրույցների արդյունք է, նկարահանված Խորհրդային Միության ամենահեռավոր անկյուններում, որտեղ աքսորել էին հայերին:

Ֆիլմի ցուցադրությունից հետո տեղի ունեցած հարց ու պատասխանի բաժնում Զարեհ Ճգնավորյանը խոստովանել է, որ ստիպված է եղել ֆիլմի որոշ հատվածներ մոնտաժել հանրային հեռուստատեսությամբ հեռարձակելու նպատակով: «Այժմ այլ կերպ կնկարահանեի այդ ֆիլմը», ասել է նա:

Երեկոյի վերջում **Հայր Մեսրոպ Լակիսյանը** շնորհավորել է ռեժիսորին եւ նրան նվիրել Անթիլիասում Հայոց ցեղասպանության հուշարձան-կոթողի մանրակերտը:

Հ. Ծ.

## «Երգող Կոստա Բրավա» իտալական մրցույթի հայկական ձայնը

### *Երգչուհի Անահիտ Սահակյանը հաղթել է միջազգային մրցույթում*

Երեկ՝ փետրվարի 4-ին, «Հայացք» մամուլի ակումբում լրագրողները հանդիպեցին իտալական «Երգող Կոստա Բրավա» ամենամյա մրցույթ-փառատոնում 1-ին տեղը գրաված պատանի երգչուհի **Անահիտ Սահակյանի**, «Անի Քոչար փրոդակշնի» տնօրեն **Անի Քոչարի** եւ երգչուհու վոկալի ուսուցչուհի **Արմանուշ Լեւոնովնայի** հետ: «Անի Քոչար փրոդակշնի» տնօրեն, «Ե՞ս Yes!» ամսագրի գլխավոր խմբագիր Անի Քոչարն ու երգչուհու վոկալի ուսուցչուհի Արմանուշ Լեւոնովնան հանդիպմանը ներկա ԶԼՄ ներկայացուցիչներին ներկայացրին միջազգային այս մրցույթում մեր մասնակցի հաջողությունները ու դրան վերաբերող մյուս մանրամասները:

Նշենք, որ հունվարի 7-ին երգչուհին մասնակցել էր Իտալիայի Բարսելոնա քաղաքում կայացած «Երգող Կոստա Բրավա» մրցույթին եւ 13-16 տարեկանների տարիքային խմբում գրավել առաջին տեղը: Հայաստանն այդ մրցույթին մասնակցում էր առաջին անգամ:

«Ուրախալի էր հասկանալ, որ իմ ելույթից հետո ժյուրիի ռուս անդամը մոտեցավ ինձ ու նշեց, որ Աստծուց տրված ձայն ունեմ, մյուսներն էլ շնորհակալություն հայտնեցին մասնակցության համար եւ նշեցին, որ իմ տարիքի համեմատ բավականին հասուն ձայն ունեմ: Ժյուրիի ռուս անդամը նույնիսկ ասաց, որ չի էլ նկատել, թե ժյուրիի մյուս անդամներն ինձ ինչ են գնահատել, սակայն ինքը տաս է գնահատել»,- հպարտությամբ նշեց երգչուհին:

Նրա վոկալի ուսուցչուհի Արմանուշ Լեւոնովնան էլ ավելացրեց, որ իր աշակերտներից հենց Անահիտին է առաջարկել մեկնել Իտալիա՝ առաջին անգամ Հայաստանը ներկայացնելու այդ մրցույթում, քանի որ նկատում էր Անահիտի պատրաստվածության մակարդակն ու բնատուր ձայնը:



Ըստ Անի Քոչարի՝ մրցույթը հիանալի հնարավորություն է տալիս անհատ կատարողներին ու խմբերին՝ մասնակցելու դրան, ինչպես նաեւ բացահայտում է նոր տաղանդներ: «Մրցույթն այնքան էլ մեծ տարածում եւ ճանաչվածություն չունի մեր երկրում, քանի որ Հայաստանն առաջին անգամ էր մասնակցում իտալական «Երգող Կոստա Բրավա» ամենամյա մրցույթ-փառատոնին: Բացի դրանից՝ մեզ մոտ հիմնականում ճանաչում ունեն այն մրցույթները, որոնք հեռարձակվում են: Այս մրցույթը պակաս կարեւորություն եւ նշանակություն չունի մեզ համար, քանի որ այն վոկալի, ձայնի եւ կատարողական արվեստի պրոֆեսիոնալ մրցույթ է, որում գնահատվում է նախ՝ ձայնը, կատարողական տեխնիկան, ապա նաեւ՝ բեմական կերպարն ու կեցվածքը, որը բացահայտում է նոր տաղանդներ, հաստատում մշակութային նոր կապեր»,- լրագրողների հետ հանդիպմանը շեշտեց Անի Քոչարը:

Պատանի երգչուհին այս մրցույթում ներկայացրել է երկու երգ՝ Սելին Դիոնի եւ Թինա Թյորների երգացանկից: Նա համոզված է, որ այս մրցույթը շրջադարձային էր իր կարիերայում, որն առավել է ոգեւորել նրան: «Երբ հայտնեցին երրորդ եւ երկրորդ տեղերի մրցանակները ստացողներին, անհամբեր սպասում էի, թե երբ պետք է իմ անունն էլ ասեն, շատ ուրախացա, որ հենց առաջին մրցանակն ինձ տվեցին, քանի որ մինչեւ մրցույթը մտածում էի, թե երկրորդ մրցանակը գուցե ստանամ»,- հպարտությամբ ասաց երգչուհին, որ չխուսափեց լրագրողների համար մի հատված կատարել մրցութային իր կատարումից:

Տեղեկացնենք, որ «Անի Քոչար փրոդակշնը» զբաղվում է պատանի երգչուհի Անահիտ Սահակյանի զանգվածային լրատվական միջոցների հետ կապված աշխատանքներով:

Ս. Հ.

## Էպսիլոն թատերախումբը մեկ տարեկան է

**Օրերս լրացավ Էպսիլոն թատերախմբի առաջին տարեդարձը: Այն դեռ նոր-նոր է քայլեր կատարում թատերական ասպարեզում, եւ ինչպես ասացին խմբի անդամները՝ ցանկանում է նորարարական, հետաքրքրական նախագծերով հանդես գալ:**

**«Էպսիլոն թատերախումբն ստեղծվել է 2012-ի փետրվարի 3-ին: Մենք ստեղծում ենք ներկայացումներ, որոնցում ձգտում ենք համադրել խոսքի, շարժման եւ երգեցողության տարրերը: 2012թ.-ի մարտի 27-ին Թատրոնի միջազգային օրվա առթիվ «Էպսիլոն» թատերախումբը կազմակերպեց թատերական երթ քաղաքի կենտրոնական փողոցներով եւ առաջին անգամ ներկայացավ հանդիսատեսին Նարեկացի արվեստի միությունում: Թատերախմբի «Վոյցեկ» մյուզիքլը (հեղ. Գեորգ Բյուխներ, բեմադրող ռեժիսոր Արթուր Մակարյան) մասնակցել է «Թատրոն-X» փառատոնին»,- «Ազգին» ասաց թատերախմբի ղեկավար Արմեն Սարգսյանը:**

**Թատերախմբի առաջին ներկայացումը «Մոռացված հողը» երաժշտական դրաման է (հեղ. Ջոն Շեֆիլդ, բեմադրող ռեժիսոր Արթուր Մակարյան), որի պրեմիերան կայացել է 2012-ի մայիսի 22-ին Հենրիկ Մալյանի անվան թատրոնի բեմում: Դերերում հանդես են եկել ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Ջանգիրովը եւ երիտասարդ դերասաններ Արմեն Սարգսյանն ու Լիանա Ավետիսյանը: 2012-ի հուլիսի**


By Edgar Martirosyan

**16-27-ը Հայաստանի թատերական գործիչների միության դահլիճում, Էպսիդիոն թատերախումբը կազմակերպեց վարպետության դասընթաց ամերիկացի ռեժիսոր Ռիչարդ Նայի հետ: Իսկ 2012-ի հոկտեմբեր ամսից թատերախումբն իրականացնում է «Հանդիպումներ» նախագիծը:**

**Թե ինչո՞ւ հենց Էպսիդոն, հարցին ի պատասխան Ա. Սարգսյանն ասաց. «Էպսիդոն (հունարեն epsidon) նշանակում է ներմուծվող, լրացնող: Հին հունական դրամայում էպսիդոնները խոսակցական տեսարաններն էին պարերգային երկու ելույթների միջեւ, դիալոգային մասերի ներմուծումը պարերգային ողբերգության մեջ կամ նոր գործող անձի մուտքը օրխեստրայում»:**

**Էպսիդոն թատերախմբի մեկ ամյակին նվիրված միջոցառմանը Նարեկացի արվեստի միության տնօրեն Նարեկ Հարությունյանը շնորհավորեց թատերախմբին՝ նվիրելով խորհրդանշական նուռ եւ ասաց. «Երբ իրենց տարիքին էի, ես եւս խաղում էի թատրոնում եւ վստահ կարող եմ ասել, որ թատրոնը ժողովրդի խոսքը բարձրաձայնելու ամենալավ միջոցն է: Ձեր մեջ տեսնում եմ եռանդ, տաղանդ եւ կամք, որը թող կրկնապատկվի: Շնորհավորելով ձեր մեկ ամյակը, ցանկանում եմ լինեք անվախ, խիզախ եւ ունենաք ասելիք»: Ն. Հարությունյանն ընդգծեց, որ Նարեկացի արվեստի միությունը միշտ պատրաստ է կանգնել թատերախմբի կողքին:**

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# ՀՀ հավաքականը մրցաշրջանը սկսում է Լյուքսեմբուրգի հետ մրցավեճով




Այսօր Հայաստանի ազգային հավաքականը Ֆրանսիայի Վալանս քաղաքի «Ժոռժ Պոմպիդու» մարզադաշտում ընկերական մրցախաղ կանցկացնի Լյուքսեմբուրգի ընտրանու հետ: Հանդիպումը կսկսվի Երեւանի ժամանակով 22:45-ին: Ինչպես տեղեկացրել ենք, խաղը չի հեռարձակվելու որեւէ հեռուստաալիքով: Սակայն չի բացառվում, որ ֆուտբոլասերները հնարավորություն ստանան խաղը դիտելու armsport.am ինտերնետային կայքում: Այդ ուղղությամբ ներկայումս աշխատանքներ են տարվում:

Հայաստանի մարզական պատվիրակությունը ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանի գլխավորությամբ Ֆրանսիա է ուղեւորվել փետրվարի 3-ին Երեւան-Լիոն չարտերային չվերթով, որտեղից ավտոբուսով մեկնել է Վալանս՝ հանգրվանելով «Նովոտել» հյուրանոցում:

Երեւանից մրցավայր են մեկնել դարպասապահներ Գեւորգ Կասպարովն ու Արսեն Բեգլարյանը, պաշտպաններ Վալերի Ալեքսանյանը, Հրայր Մկոյանը, Կամո Հովհաննիսյանը, Տարոն Ոսկանյանը, Արտակ Եդիգարյանը, կիսապաշտպան Կարեն Մուրադյանը, հարձակվող Արթուր Սարկիսովը: Հավաքականի մյուս ֆուտբոլիստներն իրենց խաղընկերներին միացան Ֆրանսիայում: Առայժմ բացակայում է միայն «Ուֆայի» հարձակվող Միխայիլ Մարկոսովը, որը վիզայի ձեւակերպման հետ կապված խնդիրներ ունի: Հնարավոր է, որ նա չկարողանա ժամանել Ֆրանսիա:

Փետրվարի 3-ին եւ 4-ին ՀՀ հավաքականը մեկական մարզում է անցկացրել Վալանսի մարզադաշտում ու այսօր նոր մրցաշրջանի իր առաջին հանդիպումը կանցկացնի:

Իր 20-ամյա կենսագրության ընթացքում Հայաստանի ազգային հավաքականն առաջին անգամ է մրցելու Լյուքսեմբուրգի ընտրանու հետ: Վերջինս եվրոպական ֆուտբոլի հետնապահների շարքին է դասվում: Ուստի արդարացված կլինի մեր հավաքականից խոշոր հաշվով հաղթանակ ակնկալել: Իհարկե, նման խաղերում արդյունքը երկրորդական պլան է մղվում: Հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը հնարավորություն է ստացել ծանոթանալու նորեկների խաղային որակներին, մշակելու եւ կիրառելու տակտիկական որոշ տարբերակներ՝ նախապատրաստվելով մարտին Չեխիայի հավաքականի հետ կայանալիք ընտրական մրցախաղին:

Հավաքականի ֆուտբոլիստների համար ներկայումս նախապատրաստական եռուն շրջան է: Բնական է, որ նրանք դեռեւս լավ մարզավիճակում չեն: Սակայն հաշվի առնելով մրցակցի ներուժը, ՀՀ հավաքականից ֆուտբոլասերները միայն հաղթանակ են սպասում: Ի դեպ, բուքմեյքերներն էլ չեն կասկածում Հայաստանի հավաքականի հաջողությանը: Մեր հավաքականի հաղթանակի գործակիցը 1,6 է, մրցակցինը՝ 6: Ոչ-ոքին գնահատվել է 3,5 գործակցով:

Լյուքսեմբուրգի հավաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում ներկայումս 148-րդ տեղում է: Լյուքսեմբուրգի ֆուտբոլի ֆեդերացիան հիմնադրվել է 1908-ին, 2 տարի անց անդամագրվել է ՖԻՖԱ-ին: Իր առաջին միջազգային հանդիպումը Լյուքսեմբուրգի ընտրանին անցկացրել է 1911-ին՝ ընկերական մրցախաղում 1-4 հաշվով զիջելով Ֆրանսիայի հավաքականին: 2 տարի անց լյուքսեմբուրգցիները նույն մրցակցի հետ խաղում առաջին հաղթանակը տոնեցին (5-4):

Պաշտոնական առաջին հանդիպումը Լյուքսեմբուրգի հավաքականն անցկացրել է 1920-ին Անտվերպենի ամառային օլիմպիական խաղերում՝ 0-3 հաշվով զիջելով հոլանդացիներին: Աշխարհի առաջնությունների ընտրական մրցաշարերին լյուքսեմբուրգցիները մասնակցում են 1934-ից: Ընտրական առաջին հանդիպումը շատ անհաջող դասավորվեց հավաքականի համար, որը 1-9 հաշվով ջախջախիչ պարտություն կրեց գերմանացիներից: Առաջին հաղթանակն աշխարհի առաջնությունների ընտրական մրցաշարերում Լյուքսեմբուրգի հավաքականը տոնել է 1961-ին՝ 4-2 հաշվով պարտության մատնելով պորտուգալացիներին:

2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում Լյուքսեմբուրգի հավաքականն ընդգրկված է F խմբում: Առաջին խաղում լյուքսեմբուրգցիները 1-2 հաշվով պարտվել են Պորտուգալիայի ընտրանուն, ապա ոչ-ոքի են խաղացել Հյուսիսային Իռլանդիայի հավաքականի հետ: Հաջորդ 2 խաղերում Լյուքսեմբուրգի հավաքականը պարտվել է Իսրայելի ընտրանուն (0-6, 0-3): Լյուքսեմբուրգցիները 1 միավորով եզրափակում են F խմբի աղյուսակը: Ընտրական հաջորդ մրցախաղը հավաքականը կանցկացնի մարտի 22-ին՝ հյուրընկալելով ադրբեջանցիներին:

Այսօրվա հանդիպումը Լյուքսեմբուրգի հավաքականի համար կլինի 541-րդը: Հավաքականն ընդամենը 51 հաղթանակ է տոնել, 67-ն ավարտել է ոչ-ոքի, կրել է 422 պարտություն: Լյուքսեմբուրգցիները խփել են 468 գնդակ, բաց են թողել 1537 գոլ: Հավաքականի ներկայիս կազմից ամենափորձառուն 32-ամյա Ռենե Պետերսն է, որը 89 խաղ է անցկացրել, խփել է 4 գնդակ:

# Մխիթարյանը Copa del Sol մրցաշարի հաղթող

Դոնեցկի «Շախտյորը» դարձավ Իսպանիայում անցկացված Copa del Sol մրցաշարի հաղթող՝ եզրափակիչում 2-1 հաշվով հաղթելով լեհական «Վիձեւին»: Այդ խաղում էլ կրկին աչքի ընկավ Հենրիխ Մխիթարյանը՝ 18-րդ րոպեին բացելով հաշիվը: 82-րդ րոպեին Էդուարդոն 2-րդ գոլը խփեց, որին լեհերը պատասխանեցին ավելացված ժամանակում Պավլովսկու խփած գնդակով:

Խաղից հետո Հենրիխ Մխիթարյանը «Շախտյորի» պաշտոնական կայքին իր տպավորություններն է հայտնել. «Մենք ոչինչ չգիտեինք «Վիձեւի» մասին, ուստի հեշտ չէր խաղալը, քանի որ թիմում բարձր էր խաղային կարգապահությունը: Լրացուցիչ դժվարություններ էր ստեղծել նաեւ ուժեղ քամին: Բայց կարեւորն այն էր, որ հաղթեցինք: Շնորհավորում եմ խաղընկերներիս ու թիմի երկրպագուներին: Մենք բնավ էլ չխնայեցինք մեր ուժերն այսօրվա խաղում: «Բորուսիայի» հետ խաղին պատրաստ լինելու համար հարկավոր է լրիվ ծանրաբեռնվածությամբ գործել: Կարծում եմ, որ Միրչա Լուչեսկուն պետք է գոհ լինի մեզանից»:



Հաջորդ օրը «Շախտյորն» առանց Մխիթարյանի 0-1 հաշվով պարտվեց նորվեգական «Օդ Գրենլանդին»: «Շախտյորն» ավարտեց ուսումնամարզական հավաքն Իսպանիայում: Թիմն անցկացրած 7 հանդիպումներից 6-ում հաղթեց, 1-ում պարտվեց: «Շախտյորի» խփած 13 գոլերից 2-ի հեղինակը Հենրիխ Մխիթարյանն է: Նշենք, որ Միրչա Լուչեսկուի գլխավորությամբ անցկացրած ձմեռային նախապատրաստական 9 շրջանների ընթացքում «Շախտյորը» 7-րդ մրցանակը շահեց՝ 2-րդ անգամ նվաճելով Copa del Sol մրցաշարի գավաթը: Առաջին անգամ թիմը նման հաջողության էր հասել 2010-ին:



# Լեւոն Բաբուջյանը նվաճեց արագ շախմատի ՀՀ չեմպիոնի տիտղոսը

Գրոսմայստեր Լեւոն Բաբուջյանը նվաճեց արագ շախմատի Հայաստանի չեմպիոնի տիտղոսը՝ 8 հնարավորից վաստակելով 7,5 միավոր: Լեւոնը շատ վստահ անցկացրեց մրցաշարը: Մեկնարկային հանդիպումներից սկսած նա 7 անընդմեջ հաղթանակ տոնեց՝ ժամկետից շուտ նվաճելով ուժեղագույնի տիտղոսը: Լեւոնը հաջորդաբար պարտության մատնեց Էդուարդ Մնացականյանին, Զոհրակ Ապրեսյանին, Տիգրան Պետրոսյանին, Մարիա Գեւորգյանին, Արսեն Եղիազարյանին, Գեւորգ Հարությունյանին եւ Հայկ Վարդանյանին: Ավարտական տուրում արդեն չեմպիոնի դերում Բաբուջյանը հաշտություն կնքեց Զավեն Անդրեասյանի հետ:




6-ական միավոր վաստակեցին Տիգրան Պետրոսյանն ու Արսեն Եղիազարյանը: Լրացուցիչ գործակիցներով արծաթե մեդալը նվաճեց Տիգրան Պետրոսյանը, որը վերջերս 2-րդ տարին անընդմեջ հռչակվել էր դասական շախմատի Հայաստանի չեմպիոն: Տիգրանը բացի Բաբուջյանից, պարտվեց նաեւ Արսեն Եղիազարյանին, իսկ մյուս 6 պարտիաներում հաղթեց Վահագն Խաչատրյանին, Սուրեն Պողոսյանին, Հայկ Վարդանյանին, Աշոտ Նադանյանին, Գեւորգ Հարությունյանին ու Տիգրան Քոթանջյանին: Ընդհանուր առմամբ արագ շախմատի ՀՀ առաջնությանը մասնակցեցին 31 շախմատիստներ:

# Գաբուզյանն ու Հայրապետյանը հաջող են մեկնարկել

Հայաստանցի 16 շախմատիստներ են մասնակցում Մոսկվայում մեկնարկած շախմատային փառատոնին: A խմբի մրցաշարի հայաստանցի 9 մասնակիցներից լավագույն արդյունքն ունեն գրոսմայստեր Հովհաննես Գաբուզյանն ու միջազգային վարպետ Հովիկ Հայրապետյանը, որոնք մեկնարկում 2 անընդմեջ հաղթանակ են տոնել ու առաջատարների թվում են:

Կանանց մրցաշարին մասնակցող Լիլիթ Գալոյանը մեկնարկում վաստակել է 1,5 միավոր՝ հաղթելով Դարիա Անուֆրիենկոյին, ոչ-ոքի խաղալով Ալեքսանդրա Ժերեբցովայի հետ:

C խմբում հանդես եկող 5 հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Արթուր Ղազարյանն ու Առնոլդ Մինասյանը, որոնք ունեն 1,5-ական միավոր:

10 ուսանող գրոսմայստերների մրցաշարն անհաջող սկսեց Ռոբերտ Հովհաննիսյանը, որը պարտվեց Ալեքսանդր Շիմանովին եւ Վլադիմիր Բելոուսին: Վերջինս Ուրի Ելիսեեւի հետ 2 միավորով գլխավորում է աղյուսակը:

# Բռնցքամարտի մրցաշարը կնվիրվի Վլադիմիր Ենգիբարյանի հիշատակին

Փետրվարի 3-ին Երեւանի Սուրբ Սարգիս եկեղեցում տեղի ունեցավ օլիմպիական չեմպիոն, անվանի բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարյանի հոգեհանգստյան արարողությունը, որին ներկա էին նաեւ ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, մարզական կառույցների ղեկավարներ ու մարզաշխարհի վետերաններ:

Խնկարկման արարողությունից հետո ՀԱՕԿ-ի փոխնախագահ, բռնցքամարտի եվրոպական ընկերակցության գործկոմի անդամ Դերենիկ Գաբրիելյանը հայտարարեց, որ Գագիկ Ծառուկյանի անվան մրցանակների միջազգային խաղարկությունն այսուհետ նվիրվելու է Վլադիմիր Ենգիբարյանի հիշատակին: Այդ մրցաշարն այսուհետ կլինի ավանդական ու կհովանավորի Գագիկ Ծառուկյանը:

# «Գանձասարն» ու «Բանանցը» կրկին պարտվեցին

Թուրքիայի Բելեք քաղաքում ուսումնամարզական հավաք անցկացնող Կապանի «Գանձասարը» 3-րդ պարտությունը կրեց: Այս անգամ Սեւադա Արզումանյանի սաները 0-4 հաշվով պարտվեցին ղազախական «Օրդաբասին»: Հիշեցնենք, որ մինչ այդ «Գանձասարը» զիջել էր չինական «Դալիան Աերբինին» (0-1) եւ Օդեսայի «Չեռնոմորեցին» (1-2):

«Բանանցն» էլ անհաջող է հանդես գալիս Կիպրոսում անցկացնող ստուգողական խաղերում: Թիմը կրկին խոշոր՝ 0-3 հաշվով պարտություն կրեց: Այս անգամ մրցակիցը լեհական «Շլյոնսկն» էր: Մինչ այդ Վլադիմիր Պյատենկոյի սաները նույնպիսի հաշվով զիջել էին Կրասնոյարսկի «Ենիսեյին»:

# Գոլազուրկ ոչ-ոքի

Ավանի ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում հերթական ստուգողական հանդիպումն անցկացրին «Շիրակն» ու «Արարատը»: Չնայած թիմերի գործադրած ջանքերին, դարպասները մնացին անառիկ:

«Շիրակը» ներկայումս իր ուսումնամարզական 2-րդ հավաքն է անցկացնում Ավանի ֆուտբոլի ակադեմիայում: Նախատեսվում է, որ թիմի կազմում փորձաշրջան կանցնեն աֆրիկացի մի քանի ֆուտբոլիստներ:

«Արարատն» այսօր կուղեւորվի Բաթում, որտեղ ուսումնամարզական հավաքի շրջանակներում ստուգողական մի քանի հանդիպում կանցկացնի:

# Արզումանյանը «Ակտոբեի» կազմում էր

ՀՀ հավաքականի պաշտպան Ռոբերտ Արզումանյանը ղազախական «Ակտոբեի» կազմում մասնակցել է մոլդովական «Զիմբրուի» հետ հանդիպմանը: Խաղն ավարտվել է ոչ-ոքի՝ 1-1: Հավաքականից վերադառնալուց հետո Արզումանյանը կրկին կմիանա «Ակտոբեին», որում փորձաշրջան անցնելուց հետո պարզ կլինի նրա հետագա ճակատագիրը:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Իոսիֆ Կոբզոնը՝ բարեգործական այցով Գյումրիում

## *Փողային գործիքներ՝ քաղաքի 4-րդ երաժշտական դպրոցին*



Անցած շաբաթ օրը բարեգործական առաքելությամբ Գյումրի էր այցելել խորհրդային եւ ռուսական էստրադայի հանրաճանաչ վարպետ, ՌԴ ժողովրդական արտիստ, նաեւ Ռուսաստանի Պետդումայի պատգամավոր Իոսիֆ Կոբզոնը: Անցած տարվա նոյեմբերի 22-ին, իր 75-ամյակի առթիվ Երեւանի Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցած «Ես սիրում եմ քեզ, կյանք» բարեգործական համերգից ստացված ողջ հասույթը անվանի երգիչը խոստացել էր տրամադրել Գյումրու արվեստի դպրոցներին՝ երաժշտական գործիքներ ձեռք բերելու նպատակով: Այժմ նա եկել էր խոստումը կատարելու:

Պատվավոր հյուրը, որն այստեղ էր ժամանել տիկնոջ եւ «Սոգլասիե» («Համաստեղություն») միջազգային բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչների հետ, քաղաքի մուտքի մոտ աղ ու հացով, փողային նվագախմբի հնչյունների ներքո դիմավորումից հետո հյուրընկալվել է Գյումրու քաղաքապետարանում, այցելել «Պատվո բլուր» հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցել նաեւ երկրաշարժի զոհերի հուշակոթողին: Սա Իոսիֆ Դավիդովիչի հերթական այցն էր Գյումրի. նա հայ ժողովրդի կողքին եղել է եւ 88-ի ավերիչ երկրաշարժին հաջորդող օրերին, եւ հետագայում անմիջական աջակցություն ցուցաբերել ծանր պայմաններում ապրող աղետյալներին:

Այցի հիմնական արարողությունը տեղի է ունեցել «Հոկտեմբեր» կինոթատրոնի սրահում: Գյումրու 4-րդ երաժշտական դպրոցը նվեր է ստացել 3 մլն 622 հազար դրամ ընդհանուր արժողությամբ փողային գործիքներ: Քաղաքապետ Սամվել Բալասանյանը աշխարհահռչակ երգչին պարգեւատրել է Գյումրու քաղաքապետարանի հուշամեդալով:

Իոսիֆ Կոբզոնը հավաքվածներին հաճելի պահեր է պարգեւել իր երգացանկից կատարումներով, հայաստանյան առաջիկա ընտրությունների հետ կապված՝ հաջողություններ մաղթել նախագահ Սերժ Սարգսյանին:

**Գ. Մ.**

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ հայտարարում է 2013թ. ընթացքում անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի եւ հարակից սարքավորումների, ինչպես նաեւ նոր մակնիշի տպիչների քարտրիջների ձեռք բերման համար մատակարար կազմակերպություններ ընտրելու նպատակով բաց մրցույթ:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ – Հայաստան Բա» ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան շ. 46 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ 2013թ.մարտի 6-ը, ժամը 17:00-ն ներառյալ: Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2013թ. Մարտի 7 -ին, ժամը 17:00-ին:

Մրցույթին մասնակցելու հրավերն ու Մրցույթի պայմանները տեղադրված են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.vtb.am:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Մրցութային կոմիտե:

Հասցեն՝ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան շ. 46,
Կոնտակտային անձ՝ Լուսինե Սուսանյան
Հեռ. +(37410) 51-37-49, ներքին՝ 8 3302
Էլ. փոստ՝ l.susanyan@vtb.am




***ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ***

Մասնագիտություն, որն անհրաժեշտ է ամենուր
ՑԱՆԿԱՆՈՒ՞Մ ԵՔ ԴԱՌՆԱԼ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՇՎԱՊԱՀ, ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՐՁ:
***«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ***
եթե ուզում եք լինել պրոֆեսիոնալ
**Բաղրամյան 24դ,**
**հեռ. 54-24-81, 54-74-81**

**Կորել է** ա/ձ Արայիկ Մելքումյանի արտարժույթի առքուվաճառքի թիվ 342/2 լիցենզիայի ներդիրը՝ տրված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:
Համարել անվավեր: 05.02.12 թ.

## Մամուլի հաղորդագրություն

*4-ը փետրվարի, 2013թ., Երեւան, Հայաստան*

Ուրախ ենք տեղեկացնել, որ ՄոբիԴրամի՝ Երեւանի, Էջմիածնի եւ Արտաշատի մասնաճյուղերում այժմ կարելի է օգտվել «Անելիք» դրամական փոխանցումների համակարգի ծառայություններից:

«Անելիքն»> առաջարկում է դրամական փոխանցումների առավելագույն հարմարություն՝ հնարավոր ամենակարճ ժամկետներում: Սակագներին եւ համակարգի հետ կապված այլ մանրամասներին ծանոթանալու համար այցելեք www.anelik.ru վեբկայքը:

**Երեւանյան մասնաճյուղեր**

| Հասցե | Աշխատանքային օրեր | Աշխատանքային ժամեր |
|---|---|---|
| Ամիրյան 3 | Երկ - Կիր | 09:00-18:00 |
| Ազատության 24/9 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Արգիշտի 4/1 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Արցախի 6/37 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| Բագրատունյաց 14 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Էրեբունու 18 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Իսահակյան 22 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Խուդյակովի 212/3 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Կիեւյան 11/1 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Կոմիտասի 58 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Հյուսիսային պողոտա 6 | Երկ - Կիր | 09:00-18:00 |
| Մալաթիայի 86/1 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Մարգարյան 19 | Երկ - Ուրբ | 09:00-18:00 |
| Սայաթ-Նովայի 12 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Վարդանանց 15/2 | Երկ - Ուրբ | 09:00-18:00 |
| Տիգրան Մեծի 18 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |
| Տիգրան Պետրոսյան 42/2 | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| | Շաբ | 12:00-16:00 |

**Մարզային մասնաճյուղեր**

| Հասցե | Աշխատանքային օրեր | Աշխատանքային ժամեր |
|---|---|---|
| **Արարատ** | | |
| Արտաշատ, | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| Օգոստոսի 23-ի 136ա | Շաբ | 12:00-16:00 |
| **Արմավիր** | | |
| Էջմիածին, | Երկ – Ուրբ | 09:00-18:00 |
| **Բաղրամյան 4դ** | **Շաբ** | **12:00-16:00** |

Տեղեկացնում ենք նաեւ, որ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի՝ CONTACT վճարային համակարգի՝ Հայաստանում լիցենզիայի կասեցման մասին որոշման, այս համակարգի ծառայությունները ՄոբիԴրամի մասնաճյուղերում այլեւս չեն տրամադրվում:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է զանգահարել ՄոբիԴրամի թեժ գիծ՝ 444 կամ 093297444:

## ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Համաձայն Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետի եւ Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի կանոնադրության 38 եւ 39-րդ կետերի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետեւ ՀԱԱՀ) ռեկտորն ընտրվում է բաց մրցույթի կարգով՝ ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդում՝ գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով:

Մրցույթն անց է կացվում ՀԱԱՀ հիմնադրամի ռեկտորի ընտրության մասին ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի կողմից 2013թ. հունվարի 22-ին հաստատված կանոնակարգին համապատասխան (թեկնածուները կանոնակարգին կարող են ծանոթանալ ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղարությունում):

ՀԱԱՀ ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել ՀՀ գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն գիտությունների դոկտորի գիտական աստիճան, պրոֆեսորի գիտական կոչում:

ՀԱԱՀ ռեկտորի թափուր պաշտոնի մրույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

ա) Դիմում՝ ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի նախագահի անունով (ինքնաառաջադրման դեպքում), իսկ ՀԱԱՀ ֆակուլտետների գիտխորհուրդների կամ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ առաջադրման մասին որոշումը եւ առաջադրվող թեկնածուի գրավոր համաձայնությունը,

բ) Երկու լուսանկար 3x4 սմ չափսի,

գ) քաղվածք աշխատանքային գրքույկից (կամ աշխատանքային գրքույկի պատճեն),

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, դոկտորի գիտական աստիճանը եւ պրոֆեսորի գիտական կոչումը հավաստող փաստաթղթերի պատճենները,

զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

է) տեղեկանք մշտական բնակության վայրից,

ը) հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը,

թ) բնութագիր՝ վերջին աշխատավայրից, եթե այն գործում է,

ժ) զինվորական գրքույկ կամ զինապարտության մասին փաստաթուղթ,

ժա) ՀԱԱՀ-ի զարգացման եւ բարեփոխումների ծրագիր-հայեցակարգ (փակ եւ կնքված ծրարով):

Մրցույթին մասնակցող հավակնորդները վերը նշված փաստաթղթերի փաթեթը (պատճենների բնօրինակներով, որոնք վերադարձվում են ստուգումից հետո) պետք է ներկայացնեն Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հոգաբարձուների խորհրդի քարտուղարություն (հասցե՝ ք.Երեւան, Տերյան փ. 74, ՀԱԱՀ I-ին մասնաշենք, 3-րդ հարկ 324 սենյակ, հեռ. 52-07-41 եւ 52-84-90) առաջին հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ս/թ փետրվարի 28-ը ներառյալ, ժամը 10-ից 14-ը (բացի շաբաթ եւ կիրակի օրերից):

Մրցույթը տեղի կունենա 2013թ. մարտի 12-ին ժամը 11:00-ին ՀԱԱՀ նիստերի փոքր դահլիճում (ք. Երեւան, Տերյան փ. 74, 329 լսարան):

***ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն,***
***Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հոգաբարձուների խորհուրդ:***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույքերի ցանկ* | | | | | |
| 1 | Իսահակյան փողոց h.28, կիսանկուղային հարկ | 15.6 | հասարակական | 5 տարի | 25400 դրամ |
| 2 | Արշակունյաց 28բ | 164.2 | հասարակական զուգարան | 5 տարի | 100000 դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ փետրվարի 20-ին ժամը16-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2013թ. փետրվարի 20-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 4.2.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: